Ապառաժ

Հիմնադրված է 1991 թվականին: 9 (372) 17-31 մայիս, 2015թ.

ԵՐԿՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ՀՅ Դաշնակցության Արցախի Կենտրոնական Կոմիտեի պաշտոնաթերթ

Մենք համացանցում

www.aparaj.am

Խմբագրական

Մայիս 28. խորհուրդ ու դասեր

1918 թվականի մայիսի 28-ը՝ որպես Հայաստանի անկախության նվաճումը խորհրդանշող կարեւորագույն թվական, պատմական անհրաժեշտություն էր: Այն նոր էջ բացեց հայ ժողովրդի պատմության մեջ: Սկսվեց հայոց նորագույն պատմության պետականության շրջանը: Մայիսի 28-ը Հայաստանի նորագույն պատմության մեջ դրոշմվեց որպես զարթոնքի, հաղթանակի, վերածննդի եւ պետականության վերակերտման օր:

Առաջին հանրապետությունը ծնվեց ու ամրացավ հերոսամարտերով՝ Բաշ-Ապարանի, Ղարաքիլիսայի եւ Սարդարապատի: 1918-1920 թթ. գոյատեւած Հայաստանի առաջին հանրապետությունը վերականգնեց հայոց անկախության ընթացքը: Հայության մեջ արմատավորվեց ազգային միասնության ու պետականության վերականգնման համահայկական տեսլականը:

Մայիսի 28-ն ունեցավ ոչ միայն իր պատմական նշանակությունը, այլեւ առաջ բերեց այն կարեւոր մի քանի դասերը, որոնք երբեւէ չեն կորցրել իրենց կարեւորությունն ու արդիականությունը:

Դեռեւս 1918-ին հայ ժողովուրդը որդեգրեց անկախությունն ու ժողովրդավարությունը՝ որպես ճշմարիտ ճանապարհ եւ որով այսօր էլ շարունակում է ընթանալ: Այս երթից չշեղվելու դեպքում նպատակակետը մեկն է՝ ամուր ու կայացած պետականությունը, զարգացող հայրենիքը:

Պետական կառուցվածքի տեսանկյունից՝ առաջին հանրապետությունը ժողովրդավարական էր՝ խորհրդարանի գերակայությամբ, քանզի երկրի ղեկավարությունը ստանձնած Դաշնակցությունը գտնում էր, որ փոքր ժողովուրդների համար սա պետական կառուցվածքի ճիշտ ձեւ է: Ուստի պատահական չէ, որ առ այսօր ՀՅ Դաշնակցությունն իր ծրագրերում հետամուտ է այս գաղափարի իրականացմանը:

Դարեր շարունակ պետականության վերականգնման համար հայությունն օգնության ձեռք էր խնդրում օտարներից՝ անվստահ լինելով սեփական ուժերին: 1918թ. մայիսի 28-ն այն ապացույցն էր, որ հաղթանակի գրավականը սեփական ուժերին հենվելու եւ միասնական պայքարի մեջ է: Այս կարեւոր դասը պետք եղավ նաեւ հետագայում: Օրինակը՝ Արցախյան պատերազմն ու հաղթանակը:

1918թ. մայիսի 28-ն արժեւորվեց նաեւ կարեւոր մեկ այլ տեսանկյունից: Այն ցեղասպանված հայ ժողովրդի առաջին հաղթանակն էր: 1915 թվականի ցեղասպանությանը հայությունը պատասխանեց մայիսի 28-ի հաղթանակով՝ դրանով իսկ կանխելով Հայաստանի արեւելյան հատվածի բնաջնջումը: Այն արդիական եղավ նաեւ հետո՝ Արցախի պարագայում, երբ Արցախյան գոյապայքարով ու անկախության հռչակումով կանխվեց արցախահայության ցեղասպանությունը, որը պիտի իրագործվեր արդեն ոչ թե Թուրքիայի, այլ նրա եղբայրակցի ձեռքով:

1918-ից 97 տարի հետո էլ մարտահրավերները չեն վերացել, քանզի այսօր էլ գերխնդիր է հայոց միասնականության ու պետականության ամրապնդման գաղափարը, այսօր էլ վտանգված է մեր պետականությունը, վտանգված է այնքան ժամանակ, քանի սահմանին անհանգիստ է եւ շարունակվում են «դիրքային պատերազմները». վտանգված է, քանի դեռ լուծված չէ մեր Դատը:

Պատմական փորձը ցույց է տվել, որ մեզ՝ հայերիս ամեն անգամ ավելի մեծ ուժ ու ավելի երկար ժամանակահատված է պահանջվում մեր ազգային կուուստների վերականգնման համար, ուստի՝ այսօր, առավել քան երբեւէ, անհրաժեշտ է զգոն լինել: Աչքի լույսի պես պահպանել է պետք պետականությունը, եւ այս ճանապարհից ոչ մի շեղում, ոչ մի սայթաքում ընդունելի չէ:



Մենք ձեռք ենք բերել այդ իրավունքը. Դավիթ Իշխանյան

Մայիսի 18-ին armtimes.com լրատվական կայքին տված հարցազրույցում «Ազատ հայրենիք» կուսակցության փոխնախագահ, ԼՂՀ 5-րդ գումարման ԱԺ փոխնախագահ Արթուր Թովմասյանը, անդրադառնալով 2017 թվականին ԼՂՀ-ում կայանալիք նախագահական ընտրություններին, նշել է, որ Արցախի երեք քաղաքական ուժերը՝ ԱԺԿ-ն, ԱՀ-ն եւ ՀՅԴ-ն սատարելու են այն թեկնածուին, ով իրենց կողմից առաջադրված է լինելու:

ՀՅԴ Արցախի ԿԿ ներկայացուցիչ Դավիթ Իշխանյանը, ի պատասխան վերջինիս հայտարարության, aparaj.am-ի թղթակցի հետ զրույցում ասել է, որ նշյալ հարցի վերաբերյալ Արթուր Թովմասյանն ապատեղեկատվություն է տարածում:

«Որեւէ քննարկում ընդհանրապես չի եղել եւ, հետեւաբար, չէր կարող լինել նման համաձայնություն: Դեռ նոր են ավարտվել ԼՂՀ ԱԺ ընտրությունները, եւ այժմ վաղ է խոսել նախագահական ընտրությունների մասին»:

Ինչ վերաբերում է Արթուր Թովմասյանի այն կարծիքին, որ առանց «Ազատ հայրենիք» կուսակցության սատարման որեւէ մեկը չի կարող դառնալ ԼՂՀ նախագահ, Դավիթ Իշխանյանը մեկնաբանեց, որ այս ընտրությունների ֆոնի վրա դատողություններ անել 2017 թվականի նախագահական ընտրությունների մասին եւ արդեն իսկ մրցապայքար հայտարարել՝ ճիշտ չէ, նամանավանդ, որ առաջիկայում հնարավոր են այլ քաղաքական զարգացումներ: «Նախագահական ընտրությունների արցախյան փորձը, սկսած 1990-ականների կեսից առ այսօր, լուրջ խորհելու տեղիք է տալիս: Ով ում եւ ինչպես է սատարել, ինչ նպատակներով եւ քաղաքական դրդապատճառներով՝ թողնում եմ ընթերցողներին: Դաշնակցության համար միշտ էլ կարեւոր է իր կուսակցության որոշումը եւ այդ որոշումը հարգելու սկզբունքը: Թե ով ում կսատարի՝ ապագայի հարց է: Կարծում եմ, որ կոռեկտ չէ հիմա նման հարցադրումներով հանդես գալ, հատկապես՝ երբ նոր են ավարտվել ԱԺ ընտրությունները: Գու՞ցե մյուս քաղաքական ուժերն ունեն ներքին համաձայնություն, սակայն ՀՅԴ-ի հետ նման հարց չի քննարկվել:

ՀՅԴ-ն, իր հերթին, օրակարգային նման հարց չի ունեցել: Դաշնակցությունն ունի իր համապատասխան կառույցային գործելաոճը: Մասնավորապես, ՀՅԴ Արցախի կառույցը երկու տարին մեկ ունենալով իր բարձրագույն ժողովը՝ ճշտում է կուսակցության առաջիկա երկու տարվա քաղաքական ուղեգիծը եւ տալիս իր քաղաքական առաջադրանքները: Հավանաբար, նոյեմբերին կայանալիք մեր բարձրագույն ժողովում մենք կանդրադառնանք 2017 թվականի նախագահական ընտրություններին»,- ասաց Դավիթ Իշխանյանը:

Արթուր Թովմասյանը նաեւ կարծիք է հայտնել, թե իբր «Ազատ հայրենիք» կուսակցությունն է ԼՂՀ ԱԺ փոխնախագահի պաշտոնը «շնորհել» Դաշնակցությանը:

Այս հարցի վերաբերյալ Դավիթ Իշխանյանը նշեց. «Մեզ այդ պաշտոնը ոչ ոք չի կարող ընծայել: Մենք ձեռք ենք բերել այդ իրավունքը՝ լինելով երկրորդ քաղաքական ուժը ԼՂՀ խորհրդարանում: Մենք քաղաքական մուրացկանություն չենք արել երբեւէ, եւ որեւէ մեկը թող չփորձի ներկայացնել մեզ այդ դերում:

Եթե 5 տարի առաջ խախտվել է խորհրդարանում մեծամասնության քվե ստացած քաղաքական ուժի՝ որպես խորհրդարանի ղեկավարի պաշտոն ստանձնելու մշակույթը, ապա այսօր էլ այդպիսի մշակույթով առաջնորդվողները թող չփորձեն սեփական քաղաքական սխալներն ու վրիպումները բարդել ուրիշների վրա»:

Կայացավ նորընտիր Ազգային ժողովի անդրանիկ նիստը

Մայիսի 21-ին գումարվել է ԼՂՀ 6-րդ գումարման Ազգային ժողովի անդրանիկ նիստը: Նիստին ներկա էին նաեւ նախագահ Բակո Սահակյանը եւ Արցախի թեմի առաջնորդ Պարգեւ արքեպիսկոպոս Մարտիրոսյանը:

Կարդացեք 2-րդ էջում

ԵՄ-Ադրբեջան «գործարք» Ռիգայում՝ հայաստանի շահերի հաշվին

Ռիգայում ավարտվեց ԵՄ «Արեւելյան գործընկերության» գագաթաժողովը: Արդյունքների ամփոփման հանգրվան դառնալու փոխարեն այն դարձավ ներքին խնդիրների սրման թատերաբեմ, բացահայտեց գոնե ներկա պահին կուտակված հիմնախնդիրները լուծելու...:

Կարդացեք 3-րդ էջում

Կայացավ նորընտիր Ազգային ժողովի անդրանիկ նիստը

Մայիսի 21-ին գումարվել է ԼՂՀ 6-րդ գումարման Ազգային ժողովի անդրանիկ նիստը: Նիստին ներկա էին նաեւ նախագահ Բակո Սահակյանը եւ Արցախի թեմի առաջնորդ Պարգեւ արքեպիսկոպոս Մարտիրոսյանը:

Նախագահը շնորհավորել է ներկաներին 6-րդ գումարման Ազգային ժողովի աշխատանքների մեկնարկի կապակցությամբ՝ նշելով, որ ազատ մրցակցությամբ, ժողովրդավարական սկզբունքներին համահունչ անցկացված ընտրությունները կարեւոր հիմք են հանդիսանում նոր ձեւավորված խորհրդարանի արդյունավետ աշխատանքի համար:

Անդրադառնալով 6-րդ գումարման Ազգային ժողովին՝ երկրի ղեկավարն ընդգծել է, որ այն, լինելով մշտական հիմունքներով գործող, պրոֆեսիոնալ խորհրդարան, պատասխանատվության բարձր աստիճան է պահանջելու յուրաքանչյուր պատգամավորից: «Սպասելիքները նոր խորհրդարանից, առաջին հերթին, վերաբերում են օրինաստեղծ գործունեությանը: Հույս ունենք, որ նոր որակ կհաղորդվի օրենքների մշակման աշխատանքներին՝ հաշվի առնելով զարգացած երկրների փորձը եւ մեր հանրապետության առանձնահատկությունները», - իր խոսքում ընդգծել է Բակո Սահակյանը:

Նախագահը կարեւորել է նաեւ միջխորհրդարանական կապերի զարգացմանն ուղղված Ազգային ժողովի աշխատանքը՝ այն դիտարկելով որպես երկկողմ հարաբերությունների հաստատման եւ Արցախի միջազգային ճանաչման արդյունավետ միջոցներից մեկը:

«Ազգային ժողովի աշխատանքների արդյունավետ իրականացումը մեծապես կախված է այն քաղաքակիրթ, աշխատանքային եւ փոխադարձ հարգանքի մթնոլորտից, որը պետք է առկա լինի խորհրդարանում»,- իր ելույթում նշել է Բակո Սահակյանը:

Նիստի ընթացքում, պատգամավորների փակ քվեարկության արդյունքում, Աժ նախագահի պաշտոնում 28 կողմ եւ 5 դեմ ձայների հարաբերությամբ վերընտրվեց ԱԺԿ պատգամավոր Աշոտ Ղուլյանը, իսկ փոխնախագահի պաշտոնում առաջադրվեց ՀՅ

Դաշնակցության պատգամավոր Վահրամ Բալայանը, ով 30 կողմ եւ 2 դեմ /1 բացակա/ ձայներով ընտրվեց փոխնախագահ:

ԼՂՀ 6-րդ գումարման Ազգային ժողովի անդրանիկ նիստում ձեւավորվեցին նաեւ մշտական հանձնաժողովներ:

Քվեարկությունների արդյունքում՝ Գիտության, կրթության, մշակույթի, երիտասարդության եւ սպորտի հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ ընտրվեց ՀՅԴ պատգամավոր Արմեն Սարգսյանը, Արտաքին հարաբերությունների մշտական հանձնաժողովի նախագահ՝ Արզիկ Մխիթարյանը («Ազատ հայրենիք» կուսակցություն), Արտադրության եւ արտադրական ենթակառուցվածքների մշտական հանձնաժողովի նախագահ՝ Արպատ Ավանեսյանը («Ազատ հայրենիք» կուսակցություն), Ֆինանսաբյուջետային եւ տնտեսական կառավարման հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ՝ Ռուսլան Իսրայելյանը («Ազատ հայրենիք» կուսակցություն), Պետահրավական հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ՝ Հովիկ Ջիվանյանը («Ազատ հայրենիք» կուսակցություն), Սոցիալական եւ առողջապահության հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ՝ Արամ Գրիգորյանը («Ազատ հայրենիք» կուսակցություն), իսկ Պաշտպանության, անվտանգության, օրինապահության հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ՝ Ժաննա Գալստյանը (Արցախի ժողովրդավարական կուսակցություն):

Նույն օրն ընտրվել են նաեւ Աժ մշտական հարցերի հանձնաժողովների նախագահաների տեղակալների անունները: Արտադրության եւ արտադրական ենթակառուցվածքների հանձնաժողովի նախագահի տեղակալ ընտրվեց ՀՅԴ անդամ Ալյոշա Գաբրիելյանը, Պաշտպանության, անվտանգության, օրինապահության հարցերի մշտական հանձնաժողովինը՝ ՀՅԴ անդամ Լեռնիկ Հովհաննիսյանը, Արտաքին հարաբերությունների մշտական հանձնաժողովի նախագահի տեղակալ՝ Դավիթ Մելքումյանը («Արցախի ժողովրդավարական» կուսակցություն), Ֆինանսաբյուջետային եւ տնտեսական կառավարման հարցերինը՝ Արմո Ծատրյանը («Արցախի ժողովրդավարական» կուսակցություն), Պետահրավական հարցերի մշտական հանձնաժողովինը՝ Արսեն Առստամյանը (անկախ պատգամավոր), Սոցիալական եւ առողջապահության հարցերի մշտական հանձնաժողովինը՝ Արարատ Օհանջանյանը («Ազատ հայրենիք» կուսակցություն), Գիտության, կրթության, մշակույթի, երիտասարդության եւ սպորտի հարցերինը՝ Վարդգես Ուլուբաբյանը («Ազատ հայրենիք» կուսակցություն):

ԼՂՀ 6-րդ գումարման Ազգային ժողովում ՀՅ Դաշնակցության «Դաշնակցություն» խմբակցությունը կազմված է 7 պատգամավորից՝ Դավիթ Իշխանյան, Արմեն Սարգսյան, Գեորգի Պետրոսյան, Վահրամ Բալայան, Ռիտա Մնացականյան, Լեռնիկ Հովհաննիսյան, Ալյոշա Գաբրիելյան: «Դաշնակցություն» խմբակցության ղեկավար է ընտրվել Դավիթ Իշխանյանը:

«ԱՊԱՌԱԺ»

Եկամտահարկի գումարները կուղղվեն հիփոթեքային վարկերի սպասարկմանը

Մայիսի 26-ին տեղի է ունեցել Արցախի Հանրապետության կառավարության հերթական նիստը:

Գործադիրի որոշմամբ՝ հանրապետությունում ներդրվել է հիպոթեքային վարկերի մատչելիության բարձրացման նոր մեխանիզմ: Այն իրագործվելու է պետական բյուջե վճարված եկամտային հարկի գումարներից՝ քաղաքացիներին հիփոթեքային վարկերի սպասարկման տոկոսավճարների վերադարձման եղանակով: Նիստում գործադիր մարմինը սահմանել է հիփոթեքային վարկի սպասարկման համար վճարված տոկոսների գումարների չափով վարձու աշխատողների եւ անհատ ձեռնարկատերերի կողմից վճարված եկամտային հարկի գումարների վերադարձման կարգը:

Որոշման համաձայն՝ փաստաթղթերի ընդունման եւ ուսումնասիրման գործառույթը վերապահվում է հարկային մարմիններին: Վարկառուն, նշված արտոնությունից օգտվելու համար, հարկային մարմին պետք է ներկայացնի համապատասխան փաստաթղթերը, իսկ հետագայում, յուրաքանչյուր եռամսյակ՝ միայն դիմում եւ տեղեկանք բանկից՝ նախորդ եռամսյակում վճարված տոկոսների գումարների մասին: Վերադարձվող գումարը կփոխանցվի շահառուի բանկային հաշվին: Այս կարգը կիրառվում է նաեւ համասեփականատեր հանդիսացող համավարկառուի վրա:

Կառավարության կողմից սահմանված՝ կառուցված եւ կառուցվող բազմաբնակարան շենքերի վերաբերյալ հարկային մարմին տեղեկություններ տրամադրելու կարգի համաձայն՝ այդ շենքերի ռեեստրը վարողի իրավասությունը վերապահվում է ԼՂՀ ԿԱ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեին: Նոր կարգով՝ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի եւ հարկային մարմնի միջեւ տեղեկություններ կփոխանակվեն բացառապես էլեկտրոնային եղանակով:

Կառավարությունն, ըստ գործունեության ոլորտների, հաստատել է պարտադիր զննության ենթակա անձանց առողջական վիճակի նախնական եւ պարբերական բժշկական զննության կարգը եւ ծավալի ու հաճախականության ցանկը: Գործադիր մարմնի հավանությանն են արժանացել նաեւ անձնական սանիտարական (բժշկական) գրքույկի ձեռքբերման, անձին ժամանակավորապես աշխատանքի ներկայանալ չթույլատրելու մասին որոշման ձեւերը եւ բժշկական զննության ենթակա անձանց անվանացանկը: Որոշման համաձայն՝ սննդամթերքի հետ անմիջականորեն շփվող՝ հանրային սննդի կազմակերպություններում, սննդի առեւտրի օբյեկտներում աշխատող անձանց, ինչպես նաեւ քոլեջների, ուսումնարանների աշխատակիցների առողջական վիճակի պարտադիր բժշկական զննության եւ սանիտարական գրքույկի առկայության վերահսկողությունը վերապահվում է գյուղատնտեսության նախարարության կառավարման ոլորտում գործող՝ Սննդամթերքի անվտանգության պետական ծառայությանը:

Բժշկասոցիալական փորձաքննության իրականացմանը վերաբերող երկու որոշումներում արված փոփոխություններով՝ կառավարությունը հստակեցրել է հաշմանդամություն ունեցող անձանց բժշկասոցիալական փորձաքննության գործընթացը:

Կառավարությունը մշակել է հանրապետության շտապ բժշկական օգնության ծառայության արդիականացման ռազմավարություն, որով նախատեսվում է բարելավել բնակչությանը ցուցաբերվող շտապ եւ անհետաձգելի բուժօգնության ծառայությունները, մատչելիությունն ու որակը:

Գործադիրը հաստատել է Արցախի Հանրապետության բարձրագույն ուսումնական հաստատություններում ուսանողական նպաստ եւ պետական կրթաթոշակ տալու կարգը: Որոշմամբ սահմանվել են բարձր առաջադիմությամբ ու որոշ սոցիալական խմբերի ուսանողներին աջակցության նպատակով բուհերի կողմից իրականացվող՝ ուսանողական նպաստի ձեւով ուսման վարձի մասնակի փոխհատուցման նվազագույն չափաքանակները:

Նիստում հաստատվել են էլեկտրաէներգիայի, ջերմային էներգիայի, գազի եւ կապի անընդհատ մատակարարում պահանջող սպառողների ցանկերը:

Կառավարության որոշմամբ՝ հաստատվել է պետական բյուջեից մարզական հասարակական կազմակերպություններին ֆինանսական աջակցության ապահովման կարգը: Ըստ դրա՝ ֆինանսական միջոցներ կտրվեն Արցախում ավանդական դարձած, մասսայականություն վայելող եւ օլիմպիական խաղերում, աշխարհի, Եվրոպայի եւ Հայաստանի Հանրապետության առաջնություններում, միջազգային մրցաշարերում բարձր արդյունքներ ցուցաբերած ֆեդերացիաներին:

Գործադիրը հաստատել է Քաշաթաղի շրջանի պատմության եւ մշակույթի անշարժ հուշարձանների պետական ցուցակը, որում ընդգրկել է 335 հուշարձան: Մեկ այլ որոշմամբ սահմանվել է զբոսաշրջային գործունեությամբ զբաղվող սուբյեկտների հաշվառման կարգը, որով բոլոր սուբյեկտների համար հաշվառում իրականացնելը դարձել է պարտադիր: Կառավարությունը սահմանել է պատմության եւ մշակույթի անշարժ հուշարձանների դրամական գնահատման կարգը:

Նիստում հավանության է արժանացել 2015թ. մարդահամարի ծրագիրը, որով առաջարկվում է հաստատել նաեւ մարդահամարի անցկացման համար նախատեսված հարցաթերթի նմուշը:

Կառավարության հավանությանն է արժանացել «ԼՂՀ վարչատարածքային բաժանման մասին» ԼՂՀ օրենքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագիծը: Նշված փոփոխության մասին անհրաժեշտությունը ծագել է Շահումյանի շրջանի 16 համայնքների վարչական սահմանների ամրացման աշխատանքների իրականացման ընթացքում: Փոփոխության արդյունքում ԼՂՀ համայնքների վարչական սահմաններում ընդգրկվող պետական սեփականություն հանդիսացող հողերի օտարման, անհատույց (մշտական) օգտագործման, վարձակալության եւ կառուցապատման իրավունքով տրամադրման կարգ սահմանելու լիազորությունները կհաստատվեն օրենքով եւ կստանան իրավական ձեւակերպումներ:

Ստեփանակերտի քաղաքապետարանի առաջարկով գործադիրը հանդես է եկել օրենսդրական նախաձեռնությամբ: Փաթեթով առաջարկվում է, մասնավորապես, «Գույքահարկի մասին ԼՂՀ օրենքում» արտոնություն սահմանել փոստային կապի ազգային օպերատորի եւ սոցիալական ապահովության մարմիններից արտոնյալ պայմաններով ավտոմեքենաներ ստացած հաշմանդամների համար, օրենքով հարկային պարտավորությունների նկատմամբ կիրառվող երեք տարվա վաղեմության ժամկետը չտարածել գույքահարկի եւ հողի հարկի մասով, ինչպես նաեւ՝ գույքահարկի եւ հողի հարկի հաշվետվությունների ներկայացման ու վճարումների կատարման ժամանակաշրջան սահմանել կիսամյակը՝ ներկայիս եռամսյակի փոխարեն: Վերջինս նախատեսված է նաեւ գործարար միջավայրի բարելավման ծրագրով:

Օրինագծերը կներկայացվեն Աժ-ի քննարկմանը:

Սեփ. ԼՐԱՏՎՈՒԹՅՈՒՆ

Լեռնային Ղարաբաղը զարգացնում է հարաբերությունները երկրների եւ սուբյեկտների հետ. Դավիթ Բաբայան

ԼՂՀ նախագահ Բ.Սահակյանի գլխավորած պատվիրակությունն օրերս աշխատանքային այցով գտնվում էր Ֆրանսիայում:

Հանդիպումներից մեկի ընթացքում քննարկվել է Ֆրանսիայի Դրոմի շրջանի ու Արցախի միջեւ կապերի խորացմանը վերաբերող հարցերի լայն շրջանակ: Համագործակցության պայմանագրեր են ստորագրվել Դրոմի շրջանի եւ Արցախի՝ Վալանս եւ Ստեփանակերտ քաղաքների միջեւ:

Արցախի Հանրապետության նախագահին շնորհվել է Դրոմի նահանգի պատվավոր քաղաքացու կոչում:

Նախագահ Սահակյանը Ֆրանսիայի Ազգային ժողովում հանդիպում է ունեցել խորհրդարանի մի խումբ պատգամավորների հետ: Հանդիպմանը քննարկվել են երկկողմ հարաբերություններին վերաբերող մի շարք հարցեր: Հատուկ ուշադրություն է դարձվել խորհրդարանական կապերի զարգացմանն ու ընդլայնմանը:

Նախագահը Ֆրանսիայի Ազգային ժողովի հետ համագործակցությունը համարել է պահանջված՝ հավելելով, որ փոխգործակցության հետագա ընդլայնման համար կան խոստումնալից հեռանկարներ:

Այդ օրերին հարեւան Ադրբեջանը դարձյալ չկարողացավ զսպել իր հիստերիան եւ բողոքի նոտա հղեց Ֆրանսիային՝ ԼՂՀ նախագահ Բակո Սահակյանի՝ Ֆրանսիա կատարած այցի կապակցությամբ: Ադրբեջանի դժգոհության մասին գրել է Ադրբեջանի ԱԳՆ մամուլի ծառայությունը:

Այս հարցի վերաբերյալ ԼՂՀ նախագահի մամլո խոսնակ Դավիթ Բաբայանը հայտարարեց, որ Լեռնային Ղարաբաղը հետեւողականորեն զարգացնում է երկկողմ հարաբերությունները երկրների եւ սուբյեկտների հետ, եւ մեկնաբանեց ԼՂՀ նախագահի՝ Ֆրանսիա կատարած այցի կապակցությամբ Բաքվի նյարդային արձագանքը:«Մենք նպատակ չունենք Բաքվին հոգեկան նոպայի հասցնել: Առանց դրա էլ Բաքուն մշտապես այդ վիճակում է: Լեռնային Ղարաբաղը զարգացնում է հարաբերությունները երկրների եւ սուբյեկտների հետ: Դա ԼՂՀ արտաքին քաղաքականության հիմնական ուղղություններից մեկն է»,- նշել է Բաբայանը՝ հիշեցնելով, որ այդ ուղղությունները երեքն են՝ հակամարտության կարգավորում, ԼՂՀ միջազգային ճանաչում, երկկողմ հարաբերությունների զարգացում:

«Ընդ որում, դրանք իրար հետ կապված չեն: Այսինքն՝ զարգացնելով հարաբերությունները՝ մենք ճանաչումը չենք դարձնում դրա նախապայման: Մենք ուղղակի զարգացնում ենք հարաբերությունները»,- ասել է Դավիթ Բաբայանը:

Միաժամանակ, նախագահի խոսնակը ենթադրեց, որ Բաքվի նյարդային արձագանքը պայմանավորված է իզուր վատնած գումարներով: Նրա խոսքով՝ Ադրբեջանը հակահայկական քարոզչության եւ պաշտոնյաներին կաշառելու վրա քիչ գումար չի ծախսում: «Ընդ որում, դրանց մի մասը ադրբեջանցի պաշտոնյաների գրպաններում է մնում: Սակայն ընկերությունը չի կարելի գնել: Եվ, ինչ գումարներ էլ որ ծախսվեն, դրանք անիմաստ ծախսեր են լինելու»,- նշել է Դավիթ Բաբայանը:

Սեփ. ԼՐԱՏՎՈՒԹՅՈՒՆ

ԵՄ-Ադրբեջան «գործարք» Ռիգայում՝ Հայաստանի շահերի հաշվին

Ռիգայում ավարտվեց ԵՄ «Արեւելյան գործընկերության» գագաթաժողովը: Արդյունքների ամփոփման հանգրվան դառնալու փոխարեն այն դարձավ ներքին խնդիրների սրման թատերաբեմ, բացահայտեց գոնե ներկա պահին կուտակված հիմնախնդիրները լուծելու՝ Բրյուսելի անընդունակությունը, եւ մեծ հաշվով՝ այն փաստը, որ ԱրլԳ ծրագիրն իրականում գտնվում է ճգնաժամում: Ծրագրի մաս կազմող 6 երկրներից եւ որեւէ մեկի մասով կոնկրետ ձեռքբերում չվավերացվեց: Չնայած Վրաստանն ու Ուկրաինան կանգնած են ԵՄ-ի հետ վիզային ռեժիմի լիբերալացման նախաշեմին, բայց ռեժիմի վերացման ուղղությամբ Բրյուսելը շարունակում է խուսափել խոստումներ տալուց:

Բելառուսի, Հայաստանի եւ Ադրբեջանի հետ հարաբերություններն առավել քան անհասկանալի են: Դեռ նախորդ տարի Վիլնյուսի գագաթաժողովից էր պարզ, որ այս երկրների հետ հարաբերությունների ձեւաչափը ենթակա է հիմնովին վերանայման՝ ունիվերսալ ծրագրերից անցնելով անհատական ծրագրերով առաջնորդվելու մարտավարության՝ նրանց աշխարհաքաղաքական եւ ռեգիոնալ խնդիրները, Ռուսաստանի հետ հարաբերությունների առանձնահատկությունները հաշվի առնելով: Չնայած Ռիգայում ԵՄ ղեկավարներն այդ նոր մարտավարությանն անցնելու մասին էին հայտարարում, սակայն դատելով այդ ուղղությամբ որեւէ գործնական քայլի բացակայությունից՝ կարելի է ասել, որ ոչ ԵՄ-ն եւ ոչ էլ, առավել եւս, ԱրլԳ անդամ այդ երեք երկրները դեռեւս պատկերացումներ չունեն՝ ինչպես է դա իրականացվելու:

Եվ դա բնական է: Որպեսզի այս դաշտում գործակցության սահմանները հստակեցվեն, նախ անհրաժեշտ է թե տնտեսական, թե քաղաքական ասպեկտներով հստակեցնել Ռուսաստանի հետ երկկողմ եւ բազմակողմ ձեւաչափերով հարաբերությունների շրջանակը: Մինչդեռ անգամ ԵՏՄ անդամ հանդիսացող Հայաստանն ու Բելառուսը չեն հասկանում՝ որտեղով է անցնում Ռուսաստանի շահերը չկոխկրտելու սահմանը: Եվ պատահական չէ, որ՝ չնայած մինչ գագաթաժողովի անցկացումը հայտարարվում էր, թե ԵՄ-ն ու Հայաստանը հռչակագիր կստորագրեն համագործակցության Շրջանակային համաձայնագրի մշակման բանակցություններ սկսելու շուրջ, սակայն կողմերն ընդամենը բավարարվեցին այդ հարցում պատրաստակամություն հայտնելուն ուղղված հայտարարություններով՝ այդ կամքը համատեղ ամփոփիչ հռչակագրում ամրագրելով: Որոշ վերապահումներով՝ գրեթե նույն իրավիճակն է նաեւ Բելառուսի եւ Ադրբեջանի պարագայում:

Այն հանգամանքը, որ չնայած անորոշությանը, Բրյուսելը եւ Երեւանը գոնե եղածը պահպանելու եւ զարգացնելու արտաքուստ ցանկություն են հայտնում, թույլ է տալիս հարաբերությունները պահել որոշակի մակարդակի վրա: Հայաստանին, բովանդակային իմաստով չտալով ոչինչ, քաղաքական առումով դա մանեւրելու, արտաքին քաղաքականության հարաբերական հավասարակշռվածությունը վերականգնելու հնարավորություն է տալիս: Դրա բացակայությունը կնախանշեր Հայաստանի մեկուսացումը՝ վերջնականապես նրան արժեզրկելով նաեւ ԵՏՄ-ում: Մինչդեռ Սերժ Սարգսյանի կողմից արված պնդումն առ այն, որ Հայաստանը «հանձնառու է ԵՄ գործընկերների հետ ձեւավորել հարաբերությունների իրավական նոր հիմքը», Շվեդիայի վարչապետ Ստեֆան Լյովենին, օրինակ, թույլ է տվել ասելու, որ ողջունում է ԵՏՄ-ի եւ ԵՄ-ի միջեւ կամուրջ դառնալուն ուղղված Հայաստանի հավասարակշռված քաղաքականությունը:

Որ ԱրլԳ ծրագիրը հայտնվել է փակուղում, հստակ դրսեւորվեց հատկապես ամփոփիչ հռչակագրի ընդունման հարցում արձանագրված խնդիրներով: Նախ՝ Հայաստանը եւ Բելառուսը հրաժարվեցին այն ստորագրել՝ Ղրիմը Ռուսաստանի կողմից անեքսիայի ենթարկված լինելու մասին կետի պատճառով: Դա ստիպեց տապալումից խուսափելու համար հռչակագրում նաեւ ամրագրել երկու երկրների առարկությունները: Ապա Ադրբեջանի արտգործնախարարը դեմոնստրատիվ լքեց նիստերի դահլիճը՝ ցույց տալով, իբր, նույն կետի կապակցությամբ իր անհամաձայնությունը: Ադրբեջանը համաձայնեց ստորագրել փաստաթուղթը միայն Ալիեւի հետ Եվրախորհրդարանի նախագահ Մարտին Շուլցի հեռախոսային բանակցություններից հետո, ինչը տեղի ունեցավ Հայաստանի շահերի հաշվին:

Գագաթաժողովից հետո կայացած ասուլիսում Լատվիայի վարչապետ Լայմդոտա Ստրայուման հայտարարեց, իսկ ԵԵԽ նախագահ Դոնալդ Տուսկը կրկնեց, որ գագաթաժողովը ճանաչում է ծրագրի անդամ բոլոր երկրների տարածքային ամբողջականությունը: Սա, թերեւս, հենց այն նախապայմանն էր, որ Ալիեւը դրել էր Տուսկի առջեւ՝ Ադրբեջանի կողմից հռչակագիրը ստորագրելու համար: Խնդրի բուն էությունը, սակայն, թաքնված է ոչ այնքան Ղրիմի հարցում կամ Ուկրաինայի տարածքային ամբողջականության ճանաչման տակ, որքան հռչակագրում ԼՂ հիմնահարցի մասով արվող չափազանց ընդհանրական ձեւակերպումներում: Բանն այն է, որ այդ մասով ընդամենը հղում է կատարվում միջազգային իրավունքի շրջանակներում հարցի կարգավորմանը՝ առանց այդ սկզբունքները կոնկրետացնելու:

Ակնհայտ է, որ Բրյուսելը դրանով ցանկացել էր այնպես անել, որ Ուկրաինայի հարցում տարածքային ամբողջականության սկզբունքի լիարժեք պաշտպանության մոտեցումը հակասության մեջ չմտնի ԼՂ հարցում ձեւավորված միջազգային դիրքորոշման հետ, որը նաեւ խարսխվում է ազգերի ինքնորոշման սկզբունքի վրա: Որովհետեւ, եթե նշվեին այդ սկզբունքները, պարզ էր դառնալու երկու համակարտությունների վերաբերյալ ԵՄ-ի եւ ԱրլԳ երկրների տարբերակված մոտեցումը: Հենց սա է, որ Ադրբեջանին դուր չէր եկել: Բաքուն արդեն տեւական ժամանակ է՝ ձգտում է ԼՂ հիմնահարցը նույնացնել ուկրաինական հիմնախնդրի հետ եւ Արեւմուտքին այս իմաստով մեղադրում է երկակի ստանդարների կիրառման մեջ:

Դա է պատճառը, որ երբ Դոնեցկում եւ Լուգանսկում սկսվում են բախումները, Ադրբեջանն անմիջապես սաստկացնում է սահմանային սադրանքները: Այս երկակիությունը շեշտելու համար էր Բաքուն որոշել խոչընդոտել Ռիգայի հռչակագրի ընդունմանը: Եվ, չնայած Ադրբեջանի նախագահի աշխատակազմի ղեկավարի տեղակալ Նովրուզ Մամեդովը հայտարարել է, թե Բաքուն զիջումների գնալով է այդ փաստաթուղթը ստորագրել, իրականում զիջում կատարողը եղել է հայկական կողմը, որովհետեւ համակերպվել է ԵՄ առաջնորդների կողմից անուղղակիորեն ԼՂ-ն Ադրբեջանի տարածքային ամբողջականության մաս հայտարարելու իրողությանը:

Այս համատեքստում է պարզ դառնում, թե ինչու նախագահ Սերժ Սարգսյանն իր ելույթում նշեց. թե՝ «Լեռնային Ղարաբաղը որեւէ առնչություն չունի Ադրբեջանի տարածքային ամբողջականության հետ, քանզի երբեք չի հանդիսացել անկախ Ադրբեջանի մաս»: Դրանով նա փորձեց բացատրել, թե ինչու է Հայաստանը ստորագրում հռչակագիրը մի պարագայում, երբ, փաստորեն, Ադրբեջանի տարածքային ամբողջականությունը զուգահեռվում է Ուկրաինայի տարածքային ամբողջականությանը: Պարզ է, որ սա շատ թույլ քայլ է եւ չի կարող փոխել իրերի դրությունը: Երեւանը նախապատվությունը տվել է ոչ թե ԼՂ հիմնահարցին՝ ելնելով, թերեւս նրանից, որ ԵՄ-ն այդ խնդրի վրա ուղղակի ազդելու միջոց չունի, այլ ԵՄ-ի հետ հարաբերությունները չվիժեցնելուն, ինչը կարող էր տեղի ունենալ, եթե Ադրբեջանից հետո մեկ էլ Հայաստանն սկսեր «պոզեր ցուցադրել»:

Գեւորգ ԱՂԱԲԱԲՅԱՆ
yerkir.am

«Ընտրությունների կուսակցությունները»՝ որպես Արցախի քաղաքական կյանքի յուրահատկություն

Արցախի քաղաքական կյանքի առանձնահատկություններից է ընտրական շրջանում նոր քաղաքական կազմակերպությունների, այսպես ասած՝ «Ընտրությունների կուսակցություններ»-ի առաջացումը, որոնք ստեղծվում են ոչ թե քաղաքական դաշտում առկա գործընթացների արդյունքում կամ հանրության առջեւ ծառացած խնդիրների լուծման համար, այլեւ նպատակ ունեն մասնակցել հենց ընտրական եւ հետընտրական գործընթացներին, որի արդյունքում որոշ անհատներ փորձում են իրենց տեղը գտնել Արցախի քաղաքական կյանքում: Վերջին ընտրական գործընթացները նույնպես բացառություն չեղան: Նախքան ընտրությունները եւ ընտրություններից անմիջապես հետո եղան հայտարարություններ նոր քաղաքական կուսակցությունների ստեղծման վերաբերյալ:

Նախ՝ այնպիսի տպավորություն է ստեղծվում, որ քաղաքական դաշտում մեկուսացված լինելով եւ ընտրական գործընթացներից դուրս մնալով, որոշ անհատներ՝ իրենց չկարողանալով դրսեւորել այլ կուսակցությունների մեջ, փորձում են ինչ-որ ձեւով խցկվել քաղաքական դաշտ: Սա թերեւս վտանգավոր դրսեւորումներ կարելի է համարել, քանի որ Արցախի անվտանգության տեսանկյունից այս ամենին նայելով՝ պետք է նշել, որ Արցախին անհրաժեշտ է նաեւ քաղաքական կայունություն, իսկ նոր քաղաքական կուսակցությունների առաջացումը, առավել եւս՝ անձնական ամբիցիաներից ելնելով, ոչ մի կերպ չեն կարող նպաստել դրան: Արցախահայությանն անհրաժեշտ են քաղաքականապես հասուն, հստակ գաղափարներ եւ ծրագրեր ունեցող կուսակցություններ: Արժեւորելով ժողովրդական հասարակարգում բազմակարծության եւ բազմակուսակցականության մեծ դերը, որին հետեւում է Արցախը, այնուամենայնիվ պետք է նշել, որ Արցախի հանրությանն անհրաժեշտ են քաղաքականապես կայուն, հստակ ուղղվածություն ու ծրագրեր ունեցող կուսակցություններ:

Ուսումնասիրելով համաշխարհային փորձը՝ հանգում ենք այն եզրահանգմանը, որ կուսակցությունները, նախքան ընտրական գործընթացներին մասնակցելը եւ լուրջ քաղաքական հայտ ներկայացնելը, պետք է անցնեն որոշակի գործընթացների միջով, որոնք տեւում են մոտ 10 տարի: Այդ ժամանակահատվածում կուսակցությունն անցնում է որոշակի ձեւավորման փուլ, որի ժամանակ հղկվում են կուսակցության գաղափարներն ու ծրագրերը, որից հետո միայն կուսակցությունը ներկայանում է հանրությանը՝ որպես քաղաքական կազմակերպություն, եւ կարող է հայտ ներկայացնել երկրի քաղաքական կյանքում որոշակի դերակատարություն ունենալու համար: Մեզ մոտ այս տեսանկյունից, մեղմ ասած, տարօրինակ, քաղաքական մշակույթի մեջ չտեղավորվող գործընթացներ են տեղի ունենում: Մասնավորապես՝ մեկ-երկու տարվա կամ նույնիսկ մի քանի ամսվա ստեղծված կուսակցությունը կարող է հայտ ներկայացնել ընտրապայքարին մասնակցելու համար եւ նույնիսկ անցնել խորհրդարան: Արդյոք նման կուսակցությունը կարող է ունենալ հստակ ծրագրեր ու գաղափարներ, արդյոք այդ կուսակցությունը ասելիք կունենա հանրությանը, արդյոք նման կուսկցությունն ունի հստակ քաղաքական կողմնորոշվածություն: Ի դեպ, քաղաքական կողմնորոշվածության եւ գաղափարախոսության վերաբերյալ նույն տարօրինակ իրավիճակն է Արցախի քաղաքական կյանքում: Ի տարբերություն համաշխարհային քաղաքական մշակույթի եւ փորձի, որտեղ յուրաքանչյուր կուսակցություն ունի հստակ քաղաքական կողմնորոշվածություն եւ ուղղվածություն, որի մասին հայտարարվում է կուսակցության ստեղծման պահից եւ նրա ծրագրերում, մեզ մոտ մեկ կամ երկու կուսակցություն են հայտարարում իրենց քաղաքական ուղղվածության եւ գաղափարական հոսքի մասին: Կուսակցությունների մեծ մասից երբեք չենք լսել քաղաքական կազմակերպության համար այս կարեւորագույն հատկանիշի մասին որեւէ հայտարարություն կամ կարծիք: Այսինքն, այդպես էլ անհայտ է մնում՝ որ կուսակցությունն է սոցիալիստական, որը՝ լիբերալ, իսկ որը՝ պահպանողական եւ այլն: Էլ չեմ խոսում նորահայտ կուսակցությունների մասին:

Իրավական տեսանկյունից այս գործընթացներում նույնպես բազմաթիվ հարցեր են առաջանում: Նախ՝ ինչպես է հնարավոր այլ կուսակցության հիմնադիրները ստեղծեն մեկ այլ կուսակցություն, առավել եւս՝ որ այդ կուսակցությունների լուծարման մասին որեւէ հայտարարություն չի եղել:

Չխորանալով նորահայտ կուսակցությունների ստեղծման շուրջ առաջացած իրավական խնդիրներում՝ պարզապես մեջբերեմ ԼՂՀ օրենսդրությունից մի քանի դրույթներ, իսկ հետեւությունները թողնեմ ընթերցողներին:

Այսպիսվ՝ ԼՂՀ կուսակցությունների մասին օրենքի 12-րդ հոդվածում նշվում է.

1. Հիմնադիր համագումարի կազմակերպիչները հիմնադիր համագումարի անցկացման օրվանից առնվազն մեկ ամիս առաջ զանգվածային լրատվության միջոցներով հրապարակում են կուսակցության հիմնադիր համագումարի անցկացման տեղի եւ ժամի մասին լրատվություն, ինչպես նաեւ՝ կուսակցության կանոնադրության եւ ծրագրի նախագծերի հիմնական դրույթները:

2. Հիմնադիր համագումարն իրավազոր է, եթե դրան մասնակցում են ներկայացուցիչներ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության շրջանների առնվազն 1/3-ից:

Նույն օրենքի 5-րդ հոդվածն ամրագրում է.

1. Պետական գրանցման պահին կուսակցությունը պարտավոր է ունենալ ոչ պակաս, քան 100 անդամ: Պետական գրանցման պահին կուսակցությունը պարտավոր է ունենալ տարածքային ստորաբաժանումներ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության շրջանների առնվազն 1/3-ում, ներառյալ՝ Ստեփանակերտում: Կուսակցությունն իրավունք ունի սույն օրենքով եւ իր կանոնադրությամբ սահմանված կարգով ստեղծել կառուցվածքային ստորաբաժանումներ:

1.1. Պետական գրանցման պահից ոչ ուշ, քան վեց ամիս հետո՝ կուսակցությունը պետք է ունենա ոչ պակաս, քան 300 անդամ, ընդ որում՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության յուրաքանչյուր շրջանում ոչ պակաս, քան 20 անդամ, եւ տարածքային ստորաբաժանումներ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության բոլոր շրջաններում, ներառյալ՝ Ստեփանակերտ քաղաքում, որի մասին գրավոր տեղեկացնում է պետական լիազորված մարմնին:

2. Կուսակցության տարածքային եւ կառուցվածքային ստորաբաժանումներն ստեղծվում եւ նրանց գործունեությունը կազմակերպվում է միայն տարածքային հատկանիշով: Պետական եւ տեղական ինքնակառավարման մարմիններում, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության զինված ուժերում, իրավապահ մարմիններում, նախադպրոցական, դպրոցական եւ այլ ուսումնական հաստատություններում, կազմակերպություններում կուսակցությունների տարածքային եւ կառուցվածքային ստորաբաժանումների ստեղծումը եւ գործունեությունն արգելվում է:

Սրանք միայն այն կարեւոր դրույթներն են, որոնք պետք է պահպանել ցանկացած կուսակցություն հիմնադրելիս: Թե որքանով են դրանք իրականացվում եւ ինչ խախտումներ են թույլատրվում՝ պարտավոր են զբաղվել համապատասխան գերատեսչությունները:

Այսքանով հանդերձ՝ հարց է առաջանում. որքանով են նպատակահարմար 100-ավոր մանր կուսակցություններ ունենալը եւ որքանով է դա նպաստում Արցախի պետականության ամրապնդմանն ու հանրության խնդիրների լուծմանը:

Վահե ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Լրագրողը մասնագիտական գործունեությամբ հանրային գործիչ է

Հարցազրույց Արցախի ժուռնալիստների միության նախագահ Կիմ Գաբրիելյանի հետ:

- Պարոն Գաբրիելյան, ինչքանո՞վ է մամուլն Արցախում ազատ: Առհասարակ, կարո՞ղ ենք այսօր ասել, որ ունենք կայացած լրատվադաշտ:

- Մամուլի ազատությունն ուղիղ համեմատական է հասարակության ազատության աստիճանին: Ոչ ազատ երկրում չի կարող լինել ազատ մամուլ, եւ՝ ընդհակառակը: Պետք չէ ուղղամտորեն վերաբերել նման հարցադրմանը, հատկապես՝ միջազգայնորեն չճանաչված երկրի պարագայում: Ես կարծում եմ, որ Արցախում արվում է հնարավորը, որպեսզի ապահովվի ազատ խոսքի իրավունքը: Համապատասխան օրենսդրական բազայի առկայությունը դրա խոսուն վկայությունն է: Նկատի ունեմ «Զանգվածային լրատվության մասին», «Տեղեկատվության ազատության մասին» եւ հարակից մյուս օրենքները, որոնք, արդեն քանի տարի է, գործում են ԼՂՀ-ում:

Ինչ մնում է կայացած լրատվադաշտ ունենալուն, ապա այդ մասին վերապահումով պիտի խոսել: ՁԼՄ-ների քանակով չի որոշվում դաշտի կայացվածության աստիճանը, այլ՝ դրանց մասնագիտական որակով: Մենք այսօր չենք կարող Արցախում ցույց տալ տեղեկատվական մի հարթակ, որը լիարժեք արդյունավետ է գործում: Դա վերաբերում է թե՛ տպագիր մամուլին, թե՛ եթերային ու էլեկտրոնային լրատվամիջոցներին:

Ինչպես գիտեք, ԼՂՀ-ում գործում է միայն մեկ՝ Արցախի հանրային հեռուստատեսությունը, ընդ որում՝ այն եթեր հեռարձակվում է օրվա ընթացքում ընդամենը չորս ժամ տեւողությամբ: Դա իր օբյեկտիվ պատճառներն ունի, իհարկե, եւ այս մասին շատ է խոսվել, բայց ավելորդ չեմ համարում կրկին շեշտել, որ միայն այլընտրանքային հեռուստատեսության պարագայում կարող է լինել մրցունակ տեղեկատվական դաշտ:

- Փոխարենը, սակայն, Արցախում ունենք մի քանի ռադիոալիքներ...

- Բացառությամբ Արցախի հանրային ռադիոյի, որը նույնպես եթեր է հեռարձակվում սահմանափակ ժամաքանակով, մյուսները կամ վերահեռարձակվում են /Հայաստանի հանրային ռադիո, «Ռադիոհայ» եւ այլն/, կամ էլ երաժշտական-ժամանցային են: Արդյունքը նույնն է՝ ռադիոլսողը զրկված է տեղեկատվություն ստանալու հնարավորությունից:

Համեմատաբար բարվոք է վիճակը տպագիր մամուլի ոլորտում: Ունենք հանրային, վարչատարածքային, գերատեսչական, կուսակցական եւ մասնագիտական ուղղվածության թերթեր: Կուզենայի հատկանշել նաեւ գերատեսչական եւ մասնագիտական ուղղվածության պարբերականները:

- Ի՞նչ կասեիք լրագրողների սոցիալական ապահովվածության մասին: Այն կարելի՞ է բավարար համարել:

- Թող ամեն լրագրող ինքն ասի՝ արդյո՞ք բավարար է այն նյութական փոխհատուցումը, որը տրվում է նրա ծանրաբեռ աշխատանքի դիմաց: Լրագրողի աշխատանքը չի կարելի գնահատել նույն սանդղակներով, որոնցով չափորոշվում է աշխատավարձը: Այն ֆիզիկական, բարոյական, հոգեբանական ու մտավոր մեծ լարումներ է պահանջում: Տեղեկատվությունն, այո, ապրանք է, որը նույնպես գին ունի, բայց չպիտի համադրել, ասենք, մեկ քառակուսի մետր ասֆալտի, կամ էլ մեկ կիլոգրամ կարտոֆիլի հետ:

Լրագրողն իր մասնագիտական գործունեությամբ հանրային գործիչ է, իսկ այս պարագայում ընդգծված է նրա հանրային պատասխանատվությունը:

- Արցախի ներկայացվածությունը միջազգային լրատվադաշտում. Արցախցի լրագրողներն ի՞նչ մասնաբաժին ունեն դրանում:

- Անշուշտ, Արցախը միջազգային ասպարեզում համապարփակ քարոզչության անհրաժեշտություն ունի, քանզի երկիրը նաեւ այդկերպ է ճանաչվում: Ցավալիորեն, արտասահմանյան լրատվամիջոցները՝ հայատառ, թե օտարալեզու, ԼՂՀ-ում թղթակցային կետեր համարյա չունեն: Դրանում, կարծում եմ, առաջին հերթին պետք է շահագրգռված լինեն իրենք՝ արտերկրի ՁԼՄ-ները, ինչը հազիվ թե առկա է:

Խնդիրը նոր չէ, եւ այդ մասին նույնպես շատ է խոսվել տարբեր հարթակներում: Դա նույնպես պայմանավորված է երկրի ճանաչված չլինելու հանգամանքով:

- Պարոն Գաբրիելյան, ի՞նչ կասեիք հակապետական, մանր ու մեծ չինովնիկների գործունեության դեմ ուղղված հրապարակումների մասին:

- Եկեք նախ տարբերակենք առողջ քննադատությունը պետության վարկանիշը վնասող հրապարակումներից: Քննադատությունը զսպող գործոն է սխալներից, երբեմն նաեւ՝ հանցավոր քայլերից խուսափելու համար: Միեւնույն ժամանակ, քննադատել՝ չի նշանակում զրպարտել կամ վիրավորել: Պետք է հավատարիմ մնալ եւ՛ օրենքի տարրին, եւ՛ լրագրողի վարքականոնին, որը Արցախում գործող լրագրողական կազմակերպություններս՝ Ստեփանակերտի մամուլի ակումբը եւ Արցախի ժուռնալիստների միությունը, տարիներ առաջ ընդունել ենք ի կատարումն:

Իսկ ահա պետության հիմքերը խարխլելուն ուղղված հրապարակումներն անթույլատրելի են: Կարծում եմ, արցախաբնակ լրագրողներն այս առումով բավականին զուսպ են: Դա բացատրվում է նրանց՝ աշխարհաքաղաքական իրողությունները ճիշտ գնահատելու եւ հայրենիքը անմնացորդ սիրելու կարողությամբ:

Հարցազրույցը՝ ՅՈՒԼՅԱ ՎԱՆՅԱՆԻ

Հայկյան նետի հավերժական ընթացքը

Մարդու անցյալն անօտարելի ժառանգություն է, իսկ ազգի անցյալը՝ հարստություն: Անցյալ, որի մեջ կերտվել է ազգի ոգին:

Հայերիս մեջ այսօր դրված է այն էությունը, որ արարվել է մեր ամենահեռավոր անցյալում, եւ մենք նույն ժողովուրդն ենք, ինչ մարդկության մանկության ժամանակ, երբ Հայկ նահապետի շուրջ խմբված գնում էինք ճակատամարտ տալու ընդդեմ բռնակալության: Գնում էինք փոքրաթիվ ուժերով մի մեծ բանակի դեմ: Ուշադրություն դարձնենք. դեռ այն ժամանակ՝ մեր պատմական երթի արշալույսին, մեր զորքը եղել է փոքրաթիվ, թշնամունը՝ մեծաթիվ: Եվ այդպես եղավ գրեթե միշտ, մինչեւ Արցախյան պատերազմի մեծ ու փոքր մարտերը: Սա պատմության անե՞ծք համարենք, թե՞ հակառակը՝ ապացուցումն է այն բանի, որ զորությունը ոչ թե զանգված է քանակի մեջ, այլ՝ հոգեւոր ու մտային խորության: Խորենացու վկայությամբ՝ փոքրաթիվ լինելու հանգամանքը Հայկին ստիպում է ճակատամարտ տալ լեռներում:

Պատմահայրը գրում է. «Բելի բազմակի ամբոխի անկարգ հրոսակը, որ հանդուգն հարձակումով ցիր ու ցան վազվզում էին երկրի երեսի վրա...»: Ճակատամարտում Հայկի լայնալիճ աղեղը խոցեց ու սպանեց Բելին: Հայոց քաջարի Նահապետը օտար նվաճողին սպանեց մեր հողի վրա, եւ այնուհետեւ հազարամյակներ շարունակ մեր ոսոխին մենք խփել ենք մեր հողի վրա, որովհետեւ մի Բելով չվերացավ բռնակալությունը մեր վրայից: Հետագա դարերում հեռվից ու մոտիկից արշավեցին, եկան նորերը... Հայոց արարչական հույզերի ծովում ծնունդ առած էպոսում Դավիթը նույնպես Մելիքին սպանում է իր երկրում, երբ մեծաթիվ զորքով եկել էր Դավթի ազատությունը վերցնելու: Երեկվա Արցախյան կռվում էլ թշնամուն խփում էինք մեր հողի վրա, մեր տան շեմին... 4500 տարի առաջ Հայկն արձակեց իր նետը:

Այդ նետը միայն իր ու իր որդոց փրկության համար չէր արձակվել: Այն ծակելով Բելի կուրծքը՝ ստրկության անարգ թաղանթը, դուրս էր եկել՝ որպես ազատ ու անկախ ընթացք դեպի գալիք ժամանակները: Հայկի նետը մեզ համար նշանակում էր շարժում եւ նպատակ, նշանակում էր բազկի ուժ, գիտելիք, ձգտում՝ առ ոգի, այն խորհրդանշում էր հայերիս կյանքն ու ներկայությունը երկրի վրա՝ ընթանալով ժամանակից ժամանակ: Այդ նետը կանգ չունի. այն մեր գոյությունը խառնում է մոլորակի շարժմանը, ազգերի հավերժական ընթացքին: Այն մեր հարատեւ պայքարի, հաղթանակի խորհրդանիշն է... 1918 թվականի հունվարի վերջին թուրք նվաճողները, խախտելով Երզնկայի զինադադարը, անցան հարձակման: Նրանք կարճ ժամանակամիջոցում գրավեցին ամբողջ Արեւմտյան Հայաստանը եւ գարնանը սկսեցին բախել Անդրկովկասի դռները:

Թուրքական հարձակման եւ ձմռան դաժան ցրտերի պատճառով տեղի ունեցան արեւմտահայության նոր կոտորածներ ու գաղթ: Արեւմտյան Հայաստանը հայաթափվեց՝ 1918 թվականի մարտի վերջին ընկավ Սարիղամիշը: Ապրիլի կեսերին Անդրկովկասյան կառավարության նախագահ Չխենկելիի դավաճանական վարքագծի հետեւանքով գրեթե առանց դիմադրության թուրքերին հանձնվեց լավ ամրացված Կարսը: Մայիսի 15-ին թուրքական զորքերը հանկարծակի հարձակումով գրավեցին Ալեքսանդրապոլը եւ առաջ շարժվեցին երկու հիմնական ուղղություններով: Թուրքական զորքերի մի խմբավորում Ալեքսանդրապոլից շարժվեց դեպի Արարատյան դաշտ՝ Երեւանը եւ Էջմիածինը գրավելու, իսկ մյուսը Ղարաքիլիսա-Ղազախով ռազմավարական ուղղություն վերցրեց դեպի Բաքու: Հայկական ազգային զորամասերն անկարող էին երկարատեւ դիմադրություն ցույց տալ զավթիչներին: Հայ ժողովրդի գլխին նորից կախվեց ֆիզիկական բնաջնջման վտանգը:

Թուրքերին դիմակայելու համար կատարվեց հայկական զինված ուժերի վերադասավորում: Ստեղծվեց երեւանյան զորախումբը, որի հրամանատարն էր գեներալ Մովսես Սիլիկյանը: Արարատյան դաշտ ներխուժած թուրք ասկյարները մայիսի 21-ին գրավեցին Սարդարապատ գյուղն ու կայարանը: Հայ ժողովուրդը ազգային-ազատագրական պայքարի ելավ, ուր վճռվելու էր նրա լինել-չլինելու հարցը: Արարատյան դաշտի ինքնապաշտպանության ոգին Երեւանի դիկտատոր Արամ Մանուկյանն էր: Նրա աննկուն կամքի եւ հմուտ կազմակերպչական ջանքերի շնորհիվ հայ ժողովուրդը հաղթանակ տոնեց: Ականատեսը այդ օրերի եւ Արամի մասին գրում է. «1918 թվականի մայիսի 17-ի երեկոյան 7-8 հազար հայ զինվորներ եւ դրանց միացած բազմահազար ժողովուրդ՝ հավաքված Երեւանի Ազգային Խորհրդի մուտքի առաջ, կընդդիմանային ճակատ գնալու: Դեռ աչքիս առջեւ է այն րոպեն, երբ Արամը պատշգամբ ելավ եւ ասաց. - Կա՛մ այստեղ ինձ կխփեք, կա՛մ բոլորդ կգնաք կռվի դաշտ: - Այս երկու խոսքը բավական եղավ, որ զինվորների մեջ բռնկվեր հայրենասիրության կամքը, եւ բոլորը միակամ որոշեցին մեկնել ռազմաճակատ»:

Մայիսի 19-ի առավոտյան զորավար Սիլիկյանը ուղիղ հեռագրաթելի մոտ է կանչում Արամին. «Արամ բարեւ, մեր դրությունը վճռական է, մենք առանց կռվի նահանջում ենք դեպի Զեյվա, թշնամին գերազանց ուժեր ունի, իմ զորամասը քայքայվում է՝ շնորհիվ թիկունքի ընդհանուր քայքայման, դասալքությունը բազմացել է: Մտածում եմ՝ թե ստիպված եմ նահանջել...»: «Զորավա՛ր, Ձեր խոսակցությունից եզրակացնում եմ, որ Դուք մտադիր եք նահանջել դեպի Երեւան, եւ նույնիսկ մայրաքաղաքը ենթարկել ռմբակոծման»: «Ամեն ինչ հնարավոր է»: «Այդ չի լինի: Ասացեք անմիջապես՝ ինչ է պետք Ձեզ հարձակողականի անցնելու եւ նախօրոք դրված խնդրի իրագործման համար»: «Փամփուշտներ, մարդիկ, հաց, տեղափոխության միջոցներ, իսկ գլխավորը՝ թիկունքի ոգեւորությունը, եւ հաղթանակը երաշխավորում եմ»: «Պահեցե՛ք, զորավա՛ր, դիրքերը երկու օր, եւ ամեն ինչ կլինի»: Արամը, իբրեւ շարժական ոգի, ամեն տեղ էր՝ հրապարակներում, շուկայում, տներում, եկեղեցիներում... եւ կոգեւորեր իր խոսքերով ու կներշնչեր ամենքին, եւ գործը եռաց: Բոլորն էլ աշխատում էին: Խրամատներ կփորեին ե՛ւ շրջանային դատարանի նախագահը, ե՛ւ դպրոցական երեխան, ե՛ւ երիտասարդ գեղեցկուհի երեւանցին, ե՛ւ 60 տարեկան վանուհին... Եվ վերջապես, հասավ վճռական գոտեմարտի պահը: Սիլիկյանը հաղորդեց, որ ինքն ամեն ինչ ունի եւ լրացուցիչ օգնության կարիք չունի: Սարդարապատի



տակ ահեղ մարտերն ընթացան մի քանի օր շարունակ: Մայիսի 26-ի երեկոյան Ազգային Խորհուրդը հավաքվել էր եւ սրտատրոփ սպասում էր ճակատամարտի ելքին: Ստացվեց Զորավար Սիլիկյանի զեկուցումը: Հիշում է Ավետիս Ահարոնյանը. «Սարդարապատ, Սարդարապատ... Ազգային Խորհրդի պատշգամբի առջեւ, հազարավոր ամբոխը հեւում էր անհանգստությունից: Հաղթության ձայներ էին շշնջում իրար:

Հավատալ... Հույսի, երջանկության դողոցք ամեն կողմում: Ահա Արամը երեւաց պատշգամբում՝ շրջապատված գործակիցներով: Հայացքները դարձան նրան... Հեռագիր կար նրա ձեռքին: Հուզմունքից գունատ է, բայց ժպիտ կա երեսին: Այդ մռայլ մարդը ուրախ է իր ձեռքի խորհրդավոր թերթիկով՝ որպես մանուկն իր բռնած թռչնիկով: Քար լռություն... Բազմությունն ասես իսկ շնչելուց դադարել էր: Ամբողջ այդ գորշ, եռուն զանգվածը դարձել էր մի հատ աչք, լսողություն: «Ժողովուրդ հայոց, լսեցե՛ք մեր քաջարի հրամանատար, զորավար Սիլիկյանի հեռագիրը. հինգ օրից ի վեր տեւող ճակատամարտը վերջացավ թշնամու կատարյալ պարտությամբ...»: Բոլորի աչքերի մեջ արցունքներ երեւացին, հաղթանակն ապահովված էր... Սարդարապատի հաղթանակը ոչ միայն հայոց ոգու փրկությունն էր, այլեւ նրա ապագայի հուսալի երաշխիքը:

Մայիսյան հերոսամարտերը հիմք հանդիսացան Հայաստանի անկախության համար: Եվ հենց մայիսի 28-ին էլ հռչակվեց Հայաստանի անկախությունը: Այսօր էլ շատերիս համար առեղծվածային է թվում այն հարցի պատասխանը, թե՝ ինչպես սոված ու լլկված, հազար կողմից բզկտված ժողովուրդը կարողացավ իր մեջ ուժ գտնել ու կերտել այդ հաղթանակը: Տարիներ այց տարոնականության ռահվիրա Հայկ Ասատրյանը, խոսելով մայիսի 28-ի մասին, ասաց. «Ոչ մի ուժ չի կարող այնպես խռովել ժողովուրդների ոգին, ինչպես ցեղորեն սպառվելու վտանգը, որ օրհասական վայրկյաններում դառնում է հավատի ահարկու աղաղակ: Մեր պատմական կյանքի բոլոր զգացումներն էին կուտակված նրանում, եւ այդ էր պատճառը, որ նրա թափը մայիսի 28-ին դարձավ տարերային: Իսկ ուր տարերքն է շարժվում, այնտեղ ոգիների օվկիանն է ալեկոծվում: Ուր ոգիների ալեկոծ խռովք կա, այնտեղ պատմությունը նորատիպ փաստեր է արձանագրում»: Եվ պատմությունն արձանագրեց այդ փաստը... Մայիսյան հերոսամարտը դարձավ հայոց նոր ժամանակների Ավարայրը: Եվ, դեռ ավելին:

Սա լոկ բարոյական հաղթանակ չէ՛ր, այլ իսկական մի հաղթանակ, որ իր խաղացած դերով ու նշանակությամբ, հիրավի, հայ ժողովրդի պատմության ամենահերոսական դրվագներից է, եթե ոչ՝ ամենահերոսականը: Հաղթանակ, որ իր դրոշմը դրեց մեր ինքնության ու մեր տեսակի վրա: Այդ հաղթանակող ոգին ուղիղ 74 տարի անց, նույն մայիսին նոր հրաշքներ էր գործել՝ թուրքական գերությունից ազատագրելով հայոց հինավուրց բերդաքաղաքը, կամ այլ կերպ ասած՝ արեւելյանց կողմանց մարգարիտ Շուշին... 1918 թվականի մայիսի 28-ին էր, որ վեր խոյացավ ՀԱՅՈՑ ԵՌԱԳՈՒՅՆԸ... Այդ օրից սկսած՝ եթե հետհաշվարկ անենք, ապա պիտի նկատենք, որ հայ ժողովրդին ճիշտ 600 տարի էր բաժանում Կիլիկյան Հայաստանի վերջին թագավոր Լեւոն Զ-ի պողպատյա սրից, որ դեպի երկինք էր պարզել հանուն ազատության՝ ի շահ իր ազգի եւ ի նպաստ՝ բարօրության: Այդ սուրը պատյան չտեսավ, մինչեւ որ հայ ռազմիկը Սարդարապատի ճակատամարտում այն նորից պարզեց ու ապա եռագույնով փաթաթեց:

Մայիսի 28-ի խորհուրդը մտքում՝ մոտ մեկ դար փայփայեց հայ ժողովուրդը, մինչեւ որ հասավ բաղձալի պահը, մինչեւ որ նորից կարողացավ ծածանել ՀԱՅՈՑ ԵՌԱԳՈՒՅՆԸ՝ հայ ժողովրդի բազմադարյան երազանքն ու փափագը: Հայաստանի առաջին հանրապետությունը, չնայած իր կարճ ընթացքին, ունեցավ շատ ու շատ նշանակալից, ոգեւորիչ, ուսանելի ու գնահատանքի արժանի փայլուն օրեր՝ ապագային որպես դաստիարակություն փոխանցելու: Առաջին հանրապետության անկումը ծնունդ էր այսօրվա ԱԶԱՏ, ԱՆԿԱԽ, սակայն ցավով պիտի նշեմ՝ Ո՛Չ ՄԻԱՑՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ... Ասում են՝ երբ առաջին հանրապետության վերջին վարչապետը՝ Սիմոն Վրացյանը, կառավարման վերջին օրը դուրս եկավ իր աշխատասենյակից ու կողպեց դուռը, բանալիները ի պահ հանձնեց կառավարության շենքի պահակին ու այսպես խոսեց. «ԱՅՍ ԲԱՆԱԼԻՆԵՐՆ ԱՄՈՒՐ ՊԱՀԻՐ, ՄԵՆՔ ՄԻ ՕՐ ԱՆՊԱՅՄԱՆ ՀԵՏ ԵՆՔ ԳԱԼՈՒ...»: Մարգարեությո՞ն էր սա, թե՞ լիակատար սրտի ցանկություն, որ հնչեց այդ օրերի առասպելական, բայց եւ հողեղեն մարդու շուրթերից, որ մի օր վճռել էր քայլել Կարմիր Սուլթանի դեմ...:

Արա ՆԱԽՇՔԱՐՅԱՆ

Հոսանքին հակառակ լողացող իրանահայ ռեժիսոր Անահիտ Աբատը

Իրանահայ ռեժիսոր Անահիտ Աբատը նոր անակնկալ է պատրաստում հայ հանդիսատեսի համար: Թե ինչ անակնկալ է՝ խոստանում է բացել փակագծերը մի քանի օրից: Իսկ մինչ այդ՝ «Ապառաժ»-ի թղթակիցը զրուցել է ռեժիսորի հետ՝ փորձելով բացահայտել Անահիտ Աբատ անունով հայուհու կերպարը:

Անահիտ Աբատը ծնվել է Թեհրանում: Մայրը ղարադաղցի է, հայրը ծագումով Գանձակից է, հորական տատը՝ Շուշեցի: 1939 թվականին աքսորվելով Հայաստանից՝ հոր ընտանիքը հաստատվել է Ղարադաղում: Ինչպես Անահիտ Աբատն է ասում՝ պապը ազգային մտածելակերպ ունեցող անձնավորությունն էր, հաճախ տեղի թուրք խաների հետ ընդհարումներ էր ունենում, ինչը իշխանության համար խնդիրներ էր առաջացնում: Նժդեհական ֆիդայական վերջին նշխարներից էր, զենք ունեցող եւ զենք կրող մարդ էր, եւ պատրաստ չէր զինաթափվելու: Նրա ընտանիքին կախաղանից փրկեց դեպի Իրան վտարումը:

Պապի Սարգսյան ազգանունը Իրանում փոխեցին Աբատ ազգանվան՝ մի շարք խնդիրներից խուսափելու համար:

«Աբատ»՝ պարսկերենից թարգմանաբար նշանակում է «շեն», «շենացնող»: «Այս ազգանունը պատահական չենք ստացել: Ընտանիքս շրջանում բավական մեծ շինարարական աշխատանքներ է իրականացրել, երկհարկանի դպրոց հիմնել: Դրանից էլ ստացանք Աբատ ազգանունը: Ես ընտանիքիս առաջին սերունդն եմ, որ հայրենիքից հեռու եմ ծնվել, սակայն հայրս կարողացել է այնպես անել, որ հայրենիքի գաղափարը միշտ արթուն մնա ընտանիքում, ինչն էլ հետագայում ազդեց թե՛ իմ մասնագիտության ընտրության, թե՛ ապագայում ֆիլմերիս թեմատիկայի ընտրության վրա: Հայրս ինձ սովորեցրել է հոսանքին հակառակ ուղղությամբ լողալ...»:

Մասնագիտության ընտրության հարցում առաջնորդվել է իր նախասիրություններով, քանի որ, ինչպես նա է ասում, ամեն ինչ պատկերներով է տեսնում, կյանքը պատկերներով պատկերացնում:

1992 թվականին Թեհրանում ավարտելով համալսարանի ռեժիսուրայի բաժինը՝ աշխատել է որպես երկրորդ ռեժիսոր Իրանի լիամետրաժ-գեղարվեստական կինոյում, աշխատել է նաեւ՝ որպես ռեժիսորի առաջին ասիստենտ, ֆիլմի տնօրեն, պրոդյուսեր եւ այլն: Նկարահանել է տասնյակից ավելի փաստագրական ֆիլմեր, սերիալներ եւ այլն:

1999 թվականին նկարահանել է Արցախի ազատագրված տարածքների պատմական հուշարձանների մասին պատմող ֆիլմ: Կարճամետրաժ ֆիլմեր է նկարել հայկական գաղութի մասին, շոշափել գաղութի հարցերը: Ունի նաեւ Իրանի հասարակական հիմնախնդիրների մասին կարճամետրաժ ֆիլմեր:

Այսօր Անահիտ Աբատն Իրանի ֆիլի ասպարզում կայացած ռեժիսոր է: Նա Իրանի կինոտան արհմիության նախագահն է: Մինչ այդ՝ երկու շրջան կինոտան արհմիության փոխնախագահն է եղել:

Ականատես է եղել Ջուղայի խաչքարերի եւ գերեզմանոցների ոչնչացմանը եւ նկարահանել Ջուղայի եւ ջուղայաբնակների մասին պատմող ֆիլմ: Ջուղայի խաչքարերի մասին լրատվամիջոցներում հայտնված տեսանյութի հեղինակը հենց Անահիտ Աբատն է:

«Կյանքիս ամենատխուր դրվագներից մեկը, ցավոք սրտի, այդ բարբարոսության ականատես լինելն էր: Հարյուրամյակների մշակույթը ոչնչացվեց եւ լցվեց Արաքս գետը: Ոչ մեկին չէի ցանկանա ականատեսը լինել նման դաժանության»,- պատմում է նա:

Պատասխանելով հարցին, թե արդյո՞ք կին ռեժիսորի համար (նամանավանդ այնպիսի հասարակությունում, ինչպիսինն է Իրանը) դժվար չէր, Անահիտ Աբատը պատասխանեց. «Կարծում եմ՝ աշխարհի ամեն երկրում դժվար է կին ռեժիսոր դառնալը: Գուցե պապերիս թողած կողահաստությո՞ւնն է, որ ինձ օգնել է հաջողության հասնել: Չեմ ստի՝ ասելով, որ դա հեշտ էր, քանի որ այս տարիներին 10 անգամ ավելի շատ եմ աշխատել, քան իրանցի գործընկերներս, քան իմ բնագավառի տղամարդիկ: Աշխատել եմ, որպեսզի իմ բնագավառում կայանամ: Ուրիշ ելք չկա, քան շարունակական եւ հետեւողական աշխատանքի միջոցով հաջողության հասնելը»:

Խոսելով իրանական ֆիլմի, գրաքննության մասին՝ Աբատը նշեց, որ ռեժիսորի համար թեմա ընտրելն ամենադժվար գործն է՝ անկախ այն բանից, թե որ երկրում ես ապրում:

«Գրաքննությունն, իհարկե, վատ բան է, սակայն Իրանում գոյություն ունեցող օրենքների չափանիշների մեջ արվեստագետները ելքեր գտնում են: Երանի աշխարհի ոչ մի երկրում սահմանափակումներ չլինեն, սակայն արվեստագետներն այդ սահմանափակումներում գտնում են իրենց արտահայտման եղանակը: Թերեւս, այդ սահմանափակումների շնորհիվ է, որ իրանական կինոն իր ազգային կինոկերպարը գտել եւ կայացել է: Այսօր իրանական կինոն յուրահատուկ դպրոց ունի աշխարհում: Այն չի զիջում աշխարհի կինոարտադրության հզորագույն երկրներին...»:

Անդրադառնալով հայկական կինոարվեստին՝ Անահիտ Աբատը նշեց, որ Հայաստանն ունեցել է այնպիսի մեծեր, ովքեր չեն զիջում աշխարհի լավագույն ռեժիսորներին: «Մենք ունեցել ենք Բեկնազարյանի նման մի տաղանդ, ով ոչնչով չի զիջում Էյզենշտեյնին, ոչնչով չի զիջում իր ժամանակակից մեծերին: Նրա «Խասփուշ» ֆիլմը, իրոք, այդ ժամանակի աշխարհի լավագույն ֆիլմերից է, որը, ցավոք սրտի, անծանոթ է համամարդկային կինոմշակույթին: Եթե ցանկանանք մինչեւ 1930 թվականը աշխարհի լավագույն ֆիլմերը մատնանշել, ապա անպայման «Խասփուշը» դրանցից մեկն է»,- ասաց նա:

Ըստ ռեժիսորի՝ հին հայկական ֆիլմերի եւ այսօրվա իրանական ֆիլմերի հաջողության գրավականն այն է, որ ռեժիսորները չեն համեմատվում ուրիշ երկրների ռեժիսորների հետ:

«Այդ մարդիկ այդպիսի հրաշք գլուգործոցներ են ստեղծել, որովհետեւ իրենց աչքը, ոգին, սիրտը, ճաշակը, ականջներն իրենց տան մեջ, բակում, ժողովրդի հետ է եղել, ոչ թե նայել են հեռուներ, ուրիշ տեղեր: Որեւէ մեկի հետ չեն համեմատվել, չափվել, ցանկացել նմանվել. եղել են իրենք իրենցով, իրենց համ ու հոտով: Երբ չինացին ֆիլմ է նկարում իր նիստուկացի մասին, չի մտածում՝ արդյո՞ք հնդիկը կամ ամերիկացին հասկանում է դա, թե ոչ: Նա նկարում է ինքն իրեն, համամարդկային կոնտեքստում»,- նշում է նա:

Ռեժիսորի կարծիքով՝ իրանական ֆիլմն աշխարհի սարդոստայնում յուրահատուկ տեղ է զբաղեցնում: Այն կարծես թե ասում է՝ սա իմ բոստանն է, իմ ծաղիկները, սա իմ ծաղիկների հոտն է, սա երկրիս մաղող անձրեւն է, սա իմ խոտերի բույրն է: Դրա համար իրանական ֆիլմը հաջողել է:

Հ.Գ -Իրանական կինոարվեստում հայերը շատ մեծ դերակատարություն են ունեցել: Առաջին եւ երկրորդ իրանական լիամետրաժ գեղարվեստական ֆիլմերն ամբողջապես հայ է նկարահանել, իրանի կինոդպրոցը հայ է հիմնել, առաջին պաստառը հայ է նկարել: Իրանի կինոթանգարանում ամենաբարձր մակարդակի գնահատականով ամբողջը ցուցադրված է:

Արմինե ՆԱՐԻՆՅԱՆ

Առաջին հանրապետության կին պատգամավորները

Նրանք առաջինն էին՝ ազգային-ազատագրական շարժման նվիրյալ հայուհիները... 1918-ին եվրոպական երկրների մեծ մասում կանայք ընտրական իրավունք չունեին: Իսկ Հայաստանում 1919-ին կայացած ընտրությունների արդյունքում հայոց Առաջին հանրապետության խորհրդարան անցած 80 պատգամավորներից 3-ը կին էին: Դժվար է բացատրել, թե ինչպես պատահեց, որ համարյա մեկ դար անց մեր խորհրդարանում ընդամենը 14 կին կա, այն էլ քվոտայի շնորհիվ: Եվ դա այն դեպքում, երբ աշխարհն արդեն շատ ավելի առաջ է անցել այս հարցում, իսկ եվրոպական երկրների մեծ մասում կանանց թիվը խորհրդարաններում մեկ երրորդին է մոտենում: Երեքն էլ Հայ Հեղափոխական Դաշնակցության անդամ էին:

Կատարինե Զալյան-Մանուկյանը Հայաստանի առաջին հանրապետության հիմնադիր Արամ Մանուկյանի կինն էր: Ընտրվելով պատգամավոր՝ աշխատում է առողջապահության հանձնաժողովում: Լինելով բժշկուհի՝ նա նվիրվել էր գաղթականների ու որբերի օգնությանը՝ օր ու գիշեր պայքար մղելով համաճարակների դեմ: Առաջին հանրապետության անկումից հետո Կատարինեի զրկանքներին գումարվում են բոլշեւիկյան իշխանության քաղաքական հետապնդումները: Մահացել է 1965 թ.: Մահվանից առաջ ասել էր դստերը. «Ես չտեսա, բայց դու անպայման կտեսնես այն օրը, երբ մարդիկ կհիշեն ու կգնահատեն քո հորը: Ես վստահ եմ, որ հայ ժողովուրդը չի մոռանա նրան»:



Պերճուհի Պարտիզպանյան-Բարսեղյանը ծնվել է 1886թ., Էդիրնեում (Թուրքիա): Ընդամենը 16 տարեկան էր, երբ հանդիպեց ապագա ամուսնուն՝ հայ հեղափոխական շարժման գործիչ Սարգիս Բարսեղյանին: Ամուսնու նախաձեռնությամբ ստեղծել է «Հայ կանանց միություն»: Մեկնել է Ժնեւ՝ ուսանելու գրականություն եւ մանկավարժություն: Այս շրջանում էլ սկսել է ստեղծագործել Էտնա կեղծանունով («Փոթորիկեն վերջ» պատմվածքների ժողովածու): Ընտրվելով խորհրդարանի պատգամավոր՝ կոորդինացնում է Ամերիկյան խնամատարության կոմիտեի հետ տարվող աշխատանքները: Հայաստանի Հանրապետության անկումից հետո շատերի պես բռնել է գաղթի ճամփան: Հաստատվել է Փարիզում, որտեղ պաշտոնավարել է Նանսենյան գրասենյակում եւ շարունակել գրական գործունեությունը: Մահացել է 1940թ.:

Վարվառա Սահակյանը խորհրդարանի առաջին նախագահ Ավետիք Սահակյանի կինն էր: Ընտրվելով խորհրդարանի պատգամավոր՝ դառնում է ՀՀ-ում կրթական ծրագրերի համակարգող: 1921թ. Փետրվարյան հեղափոխության անկումից հետո Վարվառան, ամուսինը եւ երկու զավակներն անցնում են Թավրիզ, ապա՝ Լիբանան: Բեյրութում Վարվառան նորից ակտիվ ներգրավվում է հասարակական գործունեության մեջ՝ մասնակցելով Հայ օգնության խաչ կազմակերպության աշխատանքներին: Մահացել է 1934թ.:

«ԱՊԱՌԱԺ»

Ամեն առավոտ զարթնելուց մենք գիտեինք, որ մեր ապագան հայրենիքում ենք կերտելու

Ահագնացող արտագաղթի պայմաններում, բարեբախտաբար, ականատես ենք լինում նաեւ երիտասարդ սփյուռքահայ ընտանիքների վերաբնակեցմանը Հայաստանում եւ Արցախում: Նրանցից յուրաքանչյուրը հույժ կարեւոր է համարում իր՝ իր իսկ հայրենիքում ընտանիքի ապագան կերտելը, զավակներ մեծացնելը, իր՝ թեկուզ համեստ ներդրումն ունենալը հայրենիքի զարգացման գործում: Դժբախտաբար, այդպիսիները շատ ավելի քիչ են, քան արտագաղթողները, սակայն նրանք հույսի նշույլներ են եւ օրինակ են ծառայում բոլոր նրանց համար, ովքեր այս կամ այն պատճառներով վարանում են վերադառնալ հայրենիք:

Այդպիսի օրինակելի ընտանիքներից է Հարութ եւ Լիլիա Ադամյանների ընտանիքը:

2014 թվականին նրանք իրենց 3 զավակներով վերջնական հաստատվել են Արցախում:

Հարութ Ադամյանը ՀՅ Դաշնակցության անդամ է, գաղափարի ու հայրենիքի նվիրյալ:

Հարութը ծնունդով Լիբանանի Բուրջհամուդ հայկական թաղամասից է: Մայրը ծագումով զեյթունցի է, հայրը՝ խարդբերդցի: Ավարտել է տեղի Կիլիկյան վարժարանը: Պատանեկան շրջանում ուներ բազում նախասիրություններ, որոնցից առավել հոգեհարազատը դարձավ մարտարվեստը, որն էլ հետագայում առիթ հանդիսացավ նրա՝ Արցախ տեղափոխվելուն եւ հետագայում վերջնականապես հաստատվելուն:

1985թ. Հարութը հաճախել է Լիբանանի հայ սեւ գոտիների ակադեմիա եւ արդեն 1995-ին ստացել սեւ գոտի:

«Մարտարվեստն իմ կյանքի կարեւորագույն մասը կազմեց, որի մեջ ես գտա մարմնի եւ մտքի կրթություն, հոգեւոր ներդաշնակություն»,- նշում է Հարութը:

Այդ տարիներին աշխատում էր նաեւ որպես մարզիչ: 1997թ. Կարո Քեբաբջյանը նրան առաջարկում է մեկ տարով մեկնել Արցախ՝ Արցախում մարտարվեստ դասավանդելու եւ իր գիտելիքները փոխանցելու: Նա հետեւում է ընկերոջ խորհրդին:

Արցախ գալուց մեկ տարի հետո Արցախի տարբեր շրջաններում արդեն գործում էին 20-ից ավելի մասնաճյուղեր՝ 3500-ից ավելի աշակերտներով: Մեկ տարվա գործը վերջացնելուց հետո Հարութ Ադամյանին փոխարինող չեղավ, եւ նա որոշեց մի քանի տարի եւս մնալ Արցախում:

«Այդպես կապվեցի Արցախին, նրա հող ու ջրին, եւ արդեն ես ինքս չուզեցի վերադառնալ Լիբանան,-ասում է Հարութն ու անկեղծորեն խոստովանում,- այստեղ ամեն ինչ տարբեր է, ես ինձ ավելի ազատ եմ զգում. այնքան ազատ, որքան իրեն ազատ է զգում մարդն իր սեփական օջախում»:

Արցախում էլ ծանոթացավ իր ապագա կնոջ՝ Լիլիայի հետ: Լիլիան Հարութի աշակերտներից էր: «Միանգամից հավանեցի Լիլիային. նա ամենաակտիվներից էր եւ միանգամից աչքի էր ընկնում, տարբերվում մյուսներից: 2 տարի անց՝ 1999 առաջարկեցի նրան կյանքիս ընկերը դառնալ: Շուշիում պսակադրվեցինք եւ Արցախում մեծ հայկական հարսանիք կազմակերպեցինք՝ Արցախ հրավիրելով սփյուռքի իմ բոլոր հարազատներին»,- ասում է Հարութը՝ աչքի պոչով սիրալիր նայելով կնոջը:

Ղարաբաղում մնացին մինչեւ 2005թ.: Այդ ժամանակահատվածում նա պատրաստել է 12 մարզիչների, որոնք իր գործը շարունակեցին Արցախում: Լիբանանում ապրելու տարիներին ամեն առիթով Արցախ էին գալիս:

«Ամեն ամառային արձակուրդի ոչ թե ուրիշ երկրներ էինք գնում հանգստանալու, այլ Արցախ էինք գալիս՝ մեր ընկերների, հարազատների հետ հանգիստ անցկացնելու»,- ասում է Լիլիան:

Սիրիայի պատերազմը բացասաբար է ազդել նաեւ Լիբանանի վրա: Ինչպես Հարութն է ասում՝ հայկական Բուրջհամուդը այլեւս հանգիստ չէր: Քուրդեր, արաբներ՝ տարբեր տեղերից աղավաղում էին հայկական միջավայրը: Դա էլ առիթ հանդիսացավ Արցախ տեղափոխվելուն:

«Ամեն առավոտ զարթնելուց մենք գիտեինք, որ մեր ապագան հայրենիքում ենք կերտելու, որ մի օր տեղափոխվելու ենք Արցախ, սակայն երեխաները դպրոցական տարիքի էին, մտածեցինք՝ դպրոցն ավարտելուց հետո տեղափոխվենք: Բայց վերադարձն ավելի արագ կատարվեց...»,- ասում է Լիլիան:

«Լիբանանում ապրելու տարիներին հասկացա, որ հայը հարգված, ընդունված է բոլորի կողմից: Հայի ցավը եւ ուրախությունը նաեւ իրենցն է: Հայկական տոնի կամ սգի օրերին, ի նշան հարգանքի, արաբները փակում էին իրենց խանութները, ինչը Հայաստանում եւ Արցախում չկա»,-պատմում է Լիլիան:

Լիլիան մասնագիտությամբ լրագրող է: Լիբանանի հայկական դպրոցում աշխատում էր որպես ուսուցչուհի:

Արցախ տեղափոխվելով՝ Հարութը շարունակեց իր գործը՝ որպես մարզիչ: Մի քանի ամիս է՝ աշխատում է նաեւ ԼՂՀ

զինված ուժերում՝ որպես պայմանագրային զինծառայող՝ մարզելով նաեւ զինվորներին:

«Իմ մարտարվեստը ոչ միայն մարմինն է կոփում, այլեւ՝ ոգին: Դրա համար կարեւորում եմ, որ այն ուսուցանվի նաեւ բանակում: Հայի ոգին միշտ բարձր է եւ հպարտ, քանի որ մերն է այս երկիրը, հողը, պատմական հարստությունները: Մենք ազգովի պետք է լինենք զինվորական՝ եւ ֆիզիկապես, եւ հոգեպես ուժեղ»,- ասում է նա:

Խոսելով Արցախում ապրելու դժվարությունների ու խոչընդոտների մասին՝ Հարութը մեկնաբանում է, որ, անշուշտ, դժվարություններ կան աշխատանքի, ուսման մակարդակի առումներով, սակայն այդ դժվարություններն առկա են նաեւ օտար երկրում: Սփյուռքում կարող ես մի քանի աշխատանք գտնել եւ անել միաժամանակ, շատ գումար վաստակել, սակայն այնտեղ էլ ծախսերն են շատ. ուսումը վճարովի է եւ այլն:

Պատասխանելով այն հարցին, թե հնարավո՞ր է արդյոք, որ մի օր վերադառնան Լիբանան, Հ.Ադամյանը պատասխանում է. «Մենք որոշում ենք ընդունել վերջնականապես տեղափոխվել Արցախ, եւ այդ որոշումը ոչինչ չի կարող փոխել, հակառակ դեպքում՝ չէինք տեղափոխվի,- ասում է նա ու շարունակում,- տեղափոխվելով Արցախ՝ մենք մեր հույսը չենք դրել պետության վրա: Տունն ունեինք, աշխատանքս՝ որպես մարզիչ, կար, միայն բանակում աշխատանքի ընդունվելու հարցում աջակցեցին, բայց ուրիշ հարցով չենք դիմել, չենք էլ դիմելու... Մենք քչով բավարարվում ենք: Չենք բողոքում ոչ մի բանից՝ հուսալով եւ հավատալով վաղվա օրվան: Անշուշտ, մեզ նման շատ սփյուռքահայեր կուզենային վերադառնալ հայրենիք, եթե աշխատանք ունենային Արցախում: Կարծում եմ՝ այսօր այդ ուղղությամբ աշխատանքներ տարվում են, եւ հուսով եմ՝ շուտով շատերը կվերադառնան»:

Հարութը եւ Լիլիան ունեն 3 զավակ՝ 2 որդի՝ Արամը եւ Գաբրիելը, եւ փոքրիկ Սարինը, որը 4 տարեկան է: Որդիները հոր նախասիրությունները եւ ընտրած մասնագիտությունը մասամբ են կիսում, ավելի շատ նրանց բեմարվեստն է գրավում:

Մեծ որդին՝ Արամը, այս տարի ընդունվել է Երեւանի առաջատար վարժարաններից մեկը:

Փոքրիկ Սարինը հաճախում է երաժշտական դպրոց. շատ է սիրում երգել: Եւ առիթը բաց չի թողնում իր «արվեստը» ներկայացնել բոլոր նրանց, ովքեր հյուր են գալիս իրենց տուն: «Ապառաժ»-ի խմբագրությունն էլ բացառություն չեղավ: Մենք ունկնդրեցինք նույնիսկ փոքրիկ երգչուհու հեղինակած երգերը:

Այսօր Արցախի Սեւ գոտիների ակադեմիան, որի սերմերը հենց Հարութն է գցել, մեծ հաջողությունների է հասել միջազգային ասպարեզում: Այսօր ունենք Եվրոպայի աշխարհի չեմպիոններ, առաջատարներ: Հարցին, թե ո՞րն է արցախցիների՝ այս մարտարվեստում աննախադեպ հաջողության գրավականը, Հարութը պատասխանում է.«Արցախցի պատանին իմ հանդիպած ամենաընդունակ պատանին է: Շատ շուտ են ընկալում ամեն ինչ՝ լինի դա արվեստ, մշակույթ, թե սպորտ: Պատասխանատու եւ համառ են: Միայն պետք է ճիշտ ուղղորդել նրանց, եւ շատ կարճ ժամանակահատվածում հաջողության կհասնեն»:

Խոսելով բացթողումների մասին՝ Հարութն ափսոսանքով է նշում, որ այսօր Արցախում չեն գործում մինչ 2005 թվականը եղած Արցախի սեւ գոտիների ակադեմիայի 20 մասնաճյուղերը: Պատճառը, բնականաբար, նյութական օժանդակության պակասն է:

«Այսօր շատ կարեւոր է, որ սահմանամերձ գյուղերում ունենանք մասնաճյուղեր, քանի որ Ստեփանակերտում արդեն բավականին զբաղմունք կա: Սահմանամերձ գյուղի պատանին եւ երիտասարդը իրավունք ունեն ավելի աշխույժ եւ հագեցած առօրյա, ավելի տոկուն մարմին եւ ոգի ունենալու»,- ասաց Հարութը:

Լուսինե ԹԵՎՈՍՅԱՆ

Ստամբուլի հայկական հին որբանոց «Քամփ Արմեն»-ը

Ստամբուլի Թուզլայի շրջանում գտնվող հայկական ճամբար-որբանոցը, որն առավել հայտնի է «Քամփ Արմեն» անունով, տեղի հայության համար ունի բացառիկ նշանակություն: Պոլսի հայ համայնքի՝ պետության կողմից բռնագրավված շինություններից ամենախորհրդանշականներից ու կարեւորներից է, քանի որ 1915թ. հետո «Քամփ Արմեն»-ը տուն է դարձել շուրջ 1500 հայ երեխաների համար:

1962թ. Գեդիկփաշայի հայկական բողոքական եկեղեցին գնել է այն հողատարածքը, որի վրա կառուցվել է ճամբարը: 12-30 տարեկան երեխաներն ու մեծերը, հատկապես՝ որբ ու աղքատ հայ երեխաներն ակտիվորեն մասնակցել են ճամբարի կառուցման աշխատանքներին: Քամփ Արմենում է ապաստանել, կրթվել, հայերեն սովորել շուրջ 1500 երեխա:

1983թ. շինությունը բռնագրավվել է թուրքական պետության կողմից: Գեդիկփաշայի հայ բողոքական եկեղեցու հովիվ Գրիգոր Աղաբալօղլուն այս կապակցությամբ ասել է. «Մեր եկեղեցուն պատկանող գույքը պետության ձեռքում է: Բացահայտորեն բռնագրավել են այն: Սա ամոթ է, պետությունը պետք է ազատվի այդ ամոթից»:

2011թ. Թուրքիայում օրենք ընդունվեց 1936թ. բռնագրաված եկեղեցապատկան գույքը փոքրամասնություններին վերադարձնելու մասին: Սակայն «Քամփ Արմեն»-ը ներառված չէ վերադարձվող գույքի ցանկում:

«Քամփ Արմեն»-ը օթեւան է եղել նաեւ Հրանտ Դինքի եւ նրա կնոջ՝ Ռաքելի համար: Տարիներ առաջ Հրանտ Դինքը գրել է «Քամփ Արմենում» անցկացրած տարիների մասին. «Մի առավոտյան մեզ՝ 13 երեխայիս առան ու Գեդիկփաշայից ոտքով տարան Սիրքեջի, հետո շոգենավ նստեցրին ու ուղարկեցին Հայդարփաշա, այդտեղից էլ գնացքով դեպի Թուզլա կայարան: Կայարանից մի ժամ քայլեցինք եւ մեր առաջ ծովի եւ լճի արանքում հայտնվեց անծայրածիր մի հարթ տարածություն: Այն ժամանակ Թուզլան դեռ լցված

չէր մեծահարուստների ու պետական պաշտոնյաների շքեղ առանձնատներով.... Բարակ ավազ, մարդու հետք չտեսած ծովափ եւ ծովից պոկված մի լիճ: Այդ անծայրածիր տարածության մեջ կային ընդամենը մեկ-երկու տուն, հատուկենտ թզենիներ ու զեյթունի ծառեր, առվի ափին սփռված փշոտ մոշի թփեր... Եվ մեր կառուցած վրանները: Ութից 12 տարեկան 13 նիհար երեխաներիս համար ամառներն անցան Գեդիկփաշայի որբանոցում բետոն անելով: Երեք տարի առավոտյան կանուխ արթնանալով ու մինչեւ գիշեր աշխատելով՝ կառուցեցինք, վերջացրինք ճամբարի շենքը: Մեզնից ամենակարճահասակներից մեկը՝ Զաքարը, միայնակ գրկում էր ցեմենտի պարկն ու տանիք բարձրացնում: Քնելիս, հոգնածության պատճառով, տակներս էինք անում: Երբ եկա Թուզլա, ութ տարեկան էի: Այնտեղ մնացի 20 տարի: Իմ կին Ռաքելի հետ այնտեղ ենք ծանոթացել, միասին ենք մեծացել, այնտեղ էլ ամուսնացել: Այնտեղ են ծնվել մեր երեխաները: Սեպտեմբերի 12-ից հետո մեր ճամբարի տնօրենին մեղադրեցին, որ ճամբարում մեծացնում ու դաստիարակում է հայ ահաբեկիչների: Անարդար մեղադրանք էր: Մեզնից ոչ մեկին չէին դաստիարակել այդպես: Անտեր մնացած ճամբարն ու որբանոցը չփակելու պարտականությունը մենք՝ այնտեղ մեծացած երախաներս ստանձնեցինք: Սակայն մի օր եկան ու մեր ձեռքը տվին դատարանի որոշումը: Փոքրամասնությունների ներկայացուցիչները տարածք վաճառելու իրավունք չունեն: Մեզ դուրս շպրտեցին մեր ստեղծած քաղաքակրթությունից, մեր «Ատլանտիդայից...»:

Նստեցին 1500 երեխայի քրտինքով կառուցած շենքի վրա: Յուրացրին մեր՝ երեխաներիս աշխատանքը: Դրանից հետո էլ ես կասեի՝ ձեզ հալալ լինի ու ընդունելի կիամարեի, եթե այնտեղ նորից աղքատ երեխաների համար որբանոց բացվեր կամ չքավոր ու կարիքավոր երեխաների համար ճամբար դառնար...»:

Օրերս թուրքական իշխանության կողմից սկսվել էր ճամբար-որբանոցի քանդման գործընթացը, սակայն բողոքների արդյունքում այն ժամանակավորապես դադարեցվել էր: Ճամբարի քանդման գործընթացի ամբողջական դադարեցման համար Ստամբուլում ակտիվորեն պայքարում էր «Նոր Զարթոնք» շարժումը, որի անդամները հայտարարել էին, որ իրենք չեն նահանջելու այնքան ժամանակ, մինչեւ ճամբարը չհանձնվի օրինական տերերին: Պայքարին միացել էին նաեւ ամերիկահայերը: Ամերիկայի Հայ դատի հանձնախումբը նույնիսկ արշավ էր սկսել՝ կոչ անելով Կոնգրեսին պահանջել, որ Թուրքիան անհապաղ դադարեցնի Ստամբուլում հայկական ճամբարի քանդման գործընթացը:

«Քամփ Արմեն»-ի համար պայքարողները հույս ունեն, որ իրենց կհաջողվի փրկել հարյուրավոր հայերի համար օթեւան դարձած ճամբարը:

«ԱՊԱՌԱԺ»

Աֆորիզմներ

Արդարություն եւ ճշմարտություն սիրելը մարդու ազնվության ու բարձր կրթվածության վկայությունն է:

***

Հավատարիմ, հոգատար ընկերը մեծագույն հարստություն է:

***

Նա, ով անզոր անպաշտպանին սրտի թելադրանքով փրկում է, հերոսանալու հավակնություն չի ունենում:

***

Կարծրատիպին գերի են դառնում ստեղծագործական մտածողությունից զուրկ մարդիկ:

***

Պինդ թիկունք ունեցող օրինախախտին պատժելու փոխարեն հաճախ սիրաշահում ու հովանավորում են:

***

Պաշտոնյային իրավունքներ տալիս են մարդկանց իրավունքները ապահովելու եւ ոչ թե ոտնահարելու համար:

***

Այնտեղ, որտեղ արդարություն չկա, բարեկեցություն չի կարող լինել:

***

Մարդ կա՝ ինքն իրեն կառավարել չի կարողանում, բայց երկիր կառավարելու հավակնություններ է ունենում:

***

Ուրիշի աղավաղված մտքերով ու գաղափարներով հրապուրվելը սթափ մտածողության եւ ստույգ գիտելիքների բացակայության հետեւանք է:

***

Աշխատասերի համար ժամանակի սղությունը մշտական հոգս է:

***

Քանի դեռ թափով զարգանում է զենքի արտադրությունն ու առեւտուրը՝ կայուն խաղաղությունը երազանք է:

***

Պատերազմող կողմերը՝ երբ հսկայական կորուստներ են ունենում, զենք արտադրողներն էլ հսկայական եկամուտներ են ունենում:

***

Պատերազմով ձեռք բերածը, նույնիսկ հաղթանակը, ոչ մի կերպ չի կարող փոխհատուցել ժողովրդի գենոֆոնդին հասցված կորուստը, վնասը:

***

Քաղաքական գործիչը պետք է լինի մարդասեր, իրատես ու հեռատես:

***

Առանց սոցիալական արդարության ժողովրդավարության գոյության մասին խոսելն ավելորդ է:

***

Կրակի խիստ կարիք զգացողը անտեսում է նրա անախորժ ծխի նաեւ վնասակար լինելը:

***

Դժվար գործը իրականացվում է անհրաժեշտության գիտակցումի մղումով:

***

Գաղափարները նույնպես ծնվում են տանջանքներով, ապրում փառավոր կամ տառապանքների մեջ, մահանում բնական մահով կամ բռնությամբ:

***

Լավ հասարակարգ չի լինում, լինում են բացառիկ տաղանդավոր, հանճարեղ անհատներ, ովքեր մարդկային մտքի զարգացումը առաջ են մղում:

***

Անազնիվների միջավայրում ազնիվ մարդը անազնիվ չի դառնա, բայց զոհ՝ կարող է դառնալ:

***

Եթե Աստված մեկին իմաստություն չի պարգեւում, տարիքից սպասելն իզուր է:

***

Բոլոր ժամանակներում արդարության համար պայքարը համայն մարդկության հիմնական հոգսն է:

***

Համեստությունը բարեկրթության ծաղիկն է:

***

Մարդ արարածը խաբկանքների է ենթարկվում՝ սկսած ծննդյան օրից, երբ նորածնի բերանն են դնում դատարկ ռետինե ծծիչը:

***

Ոմանք անկաշկանդ ոտնահարում են բարոյականության կանոնները՝ պատճառաբանելով՝ «թիվը փոխվել է»:

Էմմա ՊԵՏՐՈՍՅԱՆ

ՑԱՎԱԿՑԱԿԱՆ

ՀՅ Դաշնակցության Արցախի կառույցը Ստեփանակերտի «Արթուր Մկրտչյան» կոմիտեության անդամ Զավեն Ղահրամանյանի մահվան առիթով իր խորին վշտակցությունն է հայտնում ընկերոջ ընտանիքին ու հարազատներին:

ՑԱՎԱԿՑԱԿԱՆ

ՀՅ Դաշնակցության Արցախի Կառույցը Ասկերանի «Բերդ» կոմիտեության անդամ Բորիս Հարությունյանի մահվան առիթով իր խորին վշտակցությունն է հայտնում ընկերոջ ընտանիքին ու հարազատներին:

«Ապառաժ» երկշաբաթաթերթ
Ստեփանակերտ, Կնունյանց 17,
հեռ.97 38 43, E-mail: aparajtert@gmail.com
Կայքէջ՝ www.aparaj.am

Նյութերի համար պատասխանատու են հեղինակները: Թերթը կարող է տպագրել նաեւ նյութեր, որոնցում արծարծված տեսակետները չի կիսում:
Տպագրվում է Ստեփանակերտի «ԴԻԶԱԿ ՊԼՅՈՒՍ» ՍՊԸ-ում:
Գրանցման վկայական՝ 04: Տպաքանակը՝ 1000: Գինը՝ 100 դրամ:

Խմբագրական խորհուրդ